31 ՕԳՈՍՏՈՍ 2012 ՈՒՐԲԱԹ 150(5002)

# Ազգ
Azg

ISSN: 1829-1651

## ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը գալիս է, իսկ ՀԱՊԿ զորավարժությունները հետաձգվում են 10 օրով



Սեպտեմբերի 5-6-ը Հայաստան կայցելի ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենը: Նախատեսված են հանդիպումներ Հայաստանի նախագահի, պաշտպանության նախարարի, արտգործնախարարի հետ: Այդ մասին հայտնում են ԱԳՆ մամլո ծառայությունից:

Հետաքրքրական է, որ ավելի վաղ սեպտեմբերի 3-8-ին Հայաստանում նախատեսված էին ՀԱՊԿ զորավարժություններ, իսկ ահա ՀԱՊԿ տարածած տեղեկատվությամբ՝ Հայաստանի խնդրանքով դրանք հետաձգվել են 10 օրով եւ կկայանան սեպտեմբերի 15-19-ին: Պատկերացրեք, եթե այդ զորավարժությունները չհետաձգվեին՝ ՆԱՏՕ-ն ու ՀԱՊԿ-ը միաժամանակ ներկա էին լինելու Հայաստանում:

Ս. Խ.

## Հանցագործ-դրոշակ

### *Չի կարելի թույլ տալ Սաֆարովի հանձնումը Ադրբեջանին*

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

Երբ մարդկանց բազմությունը անապատի հենց մեջտեղում իր մեջ գտնվող կանանցից տենդագին կերպով ոսկի է հավաքում ու հետո այդ ոսկուց ցուլ ձուլում, որպեսզի երկրպագի որպես աստծո, այդ բազմությանը կոչում են կռապաշտ, անկախ նրանից, որ այդ երկրպագության ընթացքում քանիսն են, որ առանձին մի տեղ նստած նայում են երկնքին՝ կարծես ինչ որ մեկին սպասելիս: Նույն տրամաբանությամբ, եթե մարդկանց բազմությունը նավթով հարուստ մի երկրի հենց մայրաքաղաքում «Տարվա մարդ» է հռչակում հանցագործ մարդասպանի, ուրեմն այդ բազմությունը... Ադրբեջանում 2005-ին տարբեր ոլորտներից սնվող հասարակական կազմակերպություններ եւ ԶԼՄ-ներ հայ սպա Գուրգեն Մարգարյանին դաժանաբար ու դավադրաբար սպանած Ռամիլ Սաֆարովին հռչակեցին «Տարվա մարդ»: «Դրոշակ», որը սակայն ամբողջ աշխարհում այլ անուն ունի՝ հանցագործ:



*Լարիսա Ալավերդյան եւ Նազելի Վարդանյան*

Իհարկե, հանցագործին երբեմն եւ որոշ պարագաներում կարելի է արդարացնել, հակառակ պարագայում չէին լինի փաստաբանները, եւ կամ եթե մի արարք մեկի համար դիտարկելի է որպես հանցագործություն, դա դեռ չի ապացուցում այդ արարքի հանցագործություն լինելը: Սակայն մի՞թե չկան միասնական չափանիշներ՝ առանձին հանցագործությունները որոշելիս, եւ արդյոք Ռամիլ Սաֆարովի հանցանքը հենց այդ հանցագործություններից չէ՞: Վստահաբար է՛, քանի որ չեզոք հունգարական դատարանը շուրջ 4 տարի տեւած դատական գործընթացով Սաֆարովին, որը Ադրբեջանում նույնքան հերոս է, որքան Իլհամ Ալիեւի երգիչ փեսան՝ Էմին Ագալարովը, դատապարտեցին ցմահ ազատազրկման հունգարական մեկուսարանում: Դատաբժշկական հետազոտություններով պարզվել է, որ ինտելեկտի չափման տեստում, որտեղ առավելագույն բալը հինգն է, Սաֆարովը հավաքել է մեկ բալ...

Տես էջ 3

«ԹԻՎ 1 ՏՆՏԵՍԱԳԵՏԸ» ԶԳԻՏԻ՞

## Բագրատյանի օլիգարխիկ կապերը

Երբեմնի ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսում առաջին հայացքից տնտեսագետների պակաս չկա: Տնտեսագետներ են Բագրատ Ասատրյանը, Վահագն Խաչատրյանը եւ... նախկին վարչապետ, Հայաստանի «թիվ մեկ մասնագետի» համբավին ձգտող Հրանտ Բագրատյանը: Հետաքրքրական է, սակայն, որ ՀԱԿ-ի տնտեսագետ անդամները, բացի Հրանտ Բագրատյանից, իրենց գործունեության ընթացքում չեն քիփվել միայն եւ միայն տնտեսական հարցերի վրա: Նրանք քննադատել են երկրի քաղաքական համակարգը, իշխանություններին, կոռուպցիան, օլիգարխիկ-մենաշնորհային իրավիճակը: Սակայն ինչքան էլ փորձեցինք գտնել Հրանտ Բագրատյանի վերջին ժամանակների գեթ մեկ ելույթ, որը նվիրված չէ միայն տնտեսությանը՝ այսինքն կառավարության ու վարչապետի քննադատությանը, չկարողացանք:

Պարզից էլ պարզ է, որ Հայաստանի տնտեսությունը լավագույն օրերը չէ, որ ապրում է: Կան հսկայական չլուծված խնդիրներ, սոցիալական լրջագույն պրոբլեմներ, որոնց արմատները ձգվում են դեպի 90-ականներ ու զարգացումներ ապրեցին նաեւ 2000-ականներին: Ով-ով, սակայն Բագրատյանը շատ լավ գիտակցում է, թե ինչն է երկրի տնտեսական բարեփոխումների արգելակման հիմնական պատճառը, որ այս հինգ տարիներին ոչ մի կերպ չեն կարողանում խելքի բերել: Ով-ով, սակայն Հայաստանի թիվ մեկ տնտեսագետը շատ լավ հասկանում է, թե ինչպես կարելի է կառավարել մի երկրի տնտեսություն, որտեղ օլիգարխիկ քրեական կապերը շատ ավելի շատ են, քան բարեխիղճ տնտեսվարողները: Հայաստանի նախկին վարչապետը նաեւ շատ լավ հասկանում է, որ օլիգարխներին հարկային դաշտ բերելուց, միլիարդների հասնող գումարները բյուջե վերադարձնելուց հետո կարող եմք ունենալ որակական այլ պատկեր: Այս ամենի մասին, սակայն, Հրանտ Բագրատյանն իր ասուլիսներում, որոնք շաղախված են անձնական վիրավորանքներով, էկլեկտիկ շարժումներով ու քննադատություններով, ոչ մի բան չի խոսում:

Տես էջ 2

## «Ժառանգությունը» «Հարսնաքարի» հարցով ԱԺ հանձնաժողով ստեղծելու առաջարկ է անում

«Ժառանգություն» կուսակցության խորհրդարանական խմբակցությունը Ազգային ժողովում շրջանառության մեջ է դրել մի շատ երկար վերնագրով նախագիծ, որի իմաստն այն է, որ ստեղծվի Ազգային ժողովի հանձնաժողով, որը կուսումնասիրի ինչպես 2012 թվականի հունիսի 17-ի «Հարսնաքարի» դեպքի հանգամանքները, այնպես էլ 2001 թվականի սեպտեմբերի 25-ին տեղի ունեցած Պողոս Պողոսյանի սպանությունից հետո արմատավորված անպատժելիության մթնոլորտի, դրանց համար պատասխանատու պաշտոնյաների եւ նրանց հետ առնչություն ունեցող անձանց մասնակցությամբ տեղի ունեցած կյանքի եւ առողջության դեմ հանցագործությունները: Այդ ուսումնասիրությամբ հանձնաժողովը պետք է եզրակացություն ներկայացնի Ազգային ժողովին:

Ս. Խ.

## Նախագահ Ասադ. «Արյունահեղության պատասխանատուն թուրքական կառավարությունն է»

Սիրիայի նախագահ Ասադը հեռուստաելույթում թուրք-սիրիական սահմանի երկայնքով չեզոք գոտի ստեղծելու առաջարկի համար խստագույնս քննադատել է Թուրքիայի արտգործնախարար Դավութօղլուին: Թուրքական հանրային հեռուստատեսության վկայությամբ, նա ասել է, որ օրակարգում այդպիսի հարց չկա, չեզոք գոտու գաղափարը առաջ են քաշել թշնամական երկրները եւ ավելացրել. «Որոշ թուրք ղեկավարների տգիտության պատճառով հետ չենք գնալու: Թուրք ժողովուրդն ի սկզբանե մեզ է պաշտպանել: Արյունահեղության պատասխանատուն թուրքական կառավարությունն է»:

Հ. Չ.

## Սիրիայի նկատմամբ լարվածությունը սրելու Էրդողանի քաղաքականությունը հակազդեցություն է առաջ բերում Թուրքիայում

### *Սիրիական «ընդդիմության» սանձարձակություններին էլ հակազդում է սահմանամերձ նահանգների բնակչությունը*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Նախորդ օրը Թուրքիայի արտգործնախարար Դավութօղլուն ուղեւորվեց Նյու Յորք՝ մասնակցելու ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստին: Օրակարգում սիրիացի փախստականների հարցն է: Քանի որ նրանց զգալի մասը (ավելի քան 60 հազար) ապաստան է գտել Թուրքիայում, ուստի Դավութօղլուն հույսեր էր փայփայում, որ ԱԽ-ի անդամ երկրները հավանություն կտան թուրք-սիրիական սահմանի երկայնքով չեզոք գոտի ստեղծելու թուրքական առաջարկին:

Համանման առաջարկ արել է նաեւ Ֆրանսիան: Պարզապես Թուրքիան այս առաջարկով Ֆրանսիայից նախաձեռնությունը խլելու, միաժամանակ հյուսիսարեւելյան Սիրիայում քուրդ աշիրաթների վերահսկողությանը հանձնված շրջանը չեզոք գոտում ընդգրկելու հաշվարկներ է անում: ՄԱԿ-ի ԱԽ-ի նիստին հրավիրված էին մշտական եւ ոչ մշտական անդամներ, արտգործնախարարները: Սակայն այդ անդամներից նիստին արտգործնախարարի մակարդակով մասնակցում են միայն նախագահող երկիր Ֆրանսիան ու Հորդանանը:

Տեսնելով Ռուսաստանի եւ Չինաստանի արտգործնախարարների բացակայությունը, նիստին որոշեց չմասնակցել նաեւ ԱՄՆ պետքարտուղար Քլինթոնը: Դավութօղլուն մնաց միայնակ: Այսպիսով դեռ նիստը չսկսած ի չիք դարձան նրա չեզոք գոտու հետ կապված հույսերը:

Ինչ վերաբերում է սիրիացի փախստականներին, ապա սրանց կազմը խիստ խայտաբղետ է: Փախստականի քողի տակ Թուրքիան ճամբարներում խաղաղ սիրիացիներից եւ «Ազատ Սիրիայի բանակի» զորհայիններից բացի պատսպարում է «Ալ Ղաիդայի» ահաբեկիչներին, չեչեն վարձկաններին, աֆղան մոջահեդներին, ինչպես նաեւ դեռեւս Չեչնիայում կամ Բոսնիայում թրծված իսլամական թուրք կամավորներին: Սրանք բոլորն էլ ազատ ելումուտ ունեն Թուրքիայից Սիրիա, եւ հակառակ իշխանությունների հավաստիացումներին, ցերեկն անարգել անցնում են սահմանը, կռվելու Ասադի վարչակարգի դեմ, իսկ երեկոյան վերադառնում, որ գիշերը հանգստանան վարչապետ Էրդողանի կառավարության հատկացրած ճամբարներում:

Տես էջ 5

## Հայկական համագումարը նշում է իր հիմնադրման 40-ամյակը

Ուորենտոնի (Վիրջինիա) «Air Lie thouse» հաստատության դահլիճում 1972 թվին հավաքված մի խումբ ազգային միասնականության հարցերով մտահոգված գործիչներ եւ կազմակերպություններ հիմնեցին ամերիկահայ կազմակերպությունների մի «համագումար», որպեսզի հնարավոր լիներ հայկական շահերը եւ խնդիրները պատշաճ մակարդակով ներկայացնել ամերիկյան նահանգային եւ դաշնային կառավարություններին, Կոնգրեսին եւ վարչակազմին:

Հիմնադրման 40-ամյակի առթիվ, ի պատիվ Կալիֆոռնիայի նախկին նահանգապետ Ջորջ եւ իր տիկնոջ՝ Գլորիա Դյոքմեջյանների, Լոս Անջելեսում գալա հանդիսություն է տեղի ունենալու սեպտեմբերի 22-ին, որի ընթացքում նախկին նահանգապետը անձամբ համագումարի «Ականավոր մարդասեր» մրցանակներ է շնորհելու երկար տարիներ համայնքին ծառայած ազգայիններից՝ Էլիզաբեթ Աղաբաբյանին, Ֆլորա Դունայանդին եւ Սավի Թյուֆենկյանին:

Դյոքմեջյանը նաեւ «Հասարակական ծառայությունների» պատվավոր մրցանակ է շնորհելու Ջակ եւ Դեբի Փուչիկյաններին, որոնք տասնամյակներ շարունակ իրենց անբասիր ծառայություններն են մատուցել հայ համայնքին՝ աշխատելով կառավարության օրենսդիր եւ արդարադատության մարմիններում:

Այս ամենի մասին տեղեկացնում է Ամերիկայի հայկական համագումարից ստացված հաղորդագրությունը:

Հ. Ծ.

# Հայ-հնդկական բարեկամությունը՝ երեկ ու այսօր

Հայ-հնդկական երկկողմ հարաբերություններում օգոստոսի 31-ը նշանավորվում է որպես հոբելյանական օր: Այսօր նշվում է Հայաստանի ու Հնդկաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-րդ տարեդարձը, բայց սա բնավ չի նշանակում, թե երկու երկրների հարաբերությունները ձեւավորվել են ընդամենը 20 տարի առաջ: Նրանց հարաբերությունների վաղեմությունը հասնում է մինչեւ մեր թվարկությունից առաջ ընկած ժամանակները, քանի որ երկու երկրներն էլ գտնվել են Մետաքսի ճանապարհի վրա:

Գրական վկայություններ կան, որ Հայաստանում եղել են հնդկական բնակավայրեր, իսկ հայ վաճառականները գնացել են Հնդկաստանի Ագրա քաղաքը, որտեղ իրենց շնորհքի ու ազնվության շնորհիվ Հնդկաստանի Աքբար թագավորից ստացել են այնտեղ հաստատվելու թույլտվություն:

Անցած 20 տարիների ընթացքում եղել են նաեւ երկու երկրների բարձրաստիճան անձանց փոխադարձ այցելություններ, կնքվել են 30-ից ավելի համաձայնագրեր տարբեր ոլորտների վերաբերյալ՝ առեւտրի ու տնտեսական համագործակցության, գիտության ու տեխնոլոգիաների, օդային փոխադրումների, կրթության, մշակույթի, պաշտպանական համագործակցության, կրկնակի հարկումից խուսափելու եւ այլն:

Պանկաջ Սաքսենան ընդգծում է՝ որպեսզի որեւէ տեսակի հարաբերություն շարունակվի ու զարգանա, անհրաժեշտ է, որ դրանում ներգրավված կողմերը հասկանան մեկը մյուսի կարիքներն ու ձգտումները. «Եվ օգնեն միմյանց առանց ինչ-որ նախապայմանների»: Ըստ նրա՝ հայ-հնդկական երկկողմ հարաբերությունները ասվածի հենց վառ օրինակն են. երկու երկրները, հիմնվելով իրենց ընդունակությունների վրա, միմյանց օգնում են ամեն մեկն իր ուրույն ճանապարհով:



2 ժողովուրդներն էլ հետաքրքրված են եղել երկկողմ առեւտրով. Հայաստանը դեպի Հնդկաստան արտահանել է մորթեղեն ու ներկեր, իսկ Հայաստան ներկրել թանկարժեք քարեր, զարդեղեն, դեղաբույսեր, կտորեղեն ու համեմունքներ:

Հնդկաստանում հայկական գաղութն ավելի ընդլայնվել եւ ֆինանսապես հարստացել է 17-րդ դարի ընթացքում: Այնտեղ հայերի մեծամասնությունն ապրել է Կալկաթա, Չեննայ (նախկինում՝ Մադրաս), Մումբայ (Բոմբեյ), Ագրա ու Դելի քաղաքներում, եւ առ այսօր այդ քաղաքներում պահպանվում են հայկական եկեղեցիներն ու գերեզմանոցները: Օրինակ՝ Կալկաթայի Սուրբ Նազարեթ եկեղեցին, որը հիմնվել է 1707 թվականին, համարվում է Հնդկաստանում հայկական ամենամեծ ու ամենահին եկեղեցին: Կալկաթայում հայկական հեղինակավոր մյուս կառույցը Հայոց մարդասիրական ճեմարանն է:

Հայալեզու մամուլի ծնունդը եւս կապվում է Հնդկաստանի հետ, քանի որ Մադրասում 1794-ին տպագրվեց հայերեն առաջին պարբերականը:

Սակայն 1947 թվականի՝ Հնդկաստանի անկախությունից հետո այնտեղ ապրող հայերի մեծամասնությունը արտագաղթեց դեպի Ավստրալիա եւ այլ երկրներ՝ Հնդկաստանում թողնելով միայն հայկական մի փոքր համայնք:

Հայաստանում Հնդկաստանի դեսպանատան գործերի ժամանակավոր հավատարմատար **Պանկաջ Սաքսենան** հարցազրույցի ժամանակ պատմական տվյալներին անդրադառնալուց հետո ասում է. «Բացի մեր ժողովուրդների հարաբերությունների մասին պատմական տվյալներից, ներկայումս կգտնեք եւ նմանություններ մեր ապրելաձեւի, մտածողության ու մարդկանց արտաքինի միջեւ»:

Այնուհետեւ վերադառնալով օրվա գլխավոր թեմային՝ դիվանագիտական հարաբերությունների տարեդարձին՝ Պանկաջ Սաքսենան նշում է, որ Խորհրդային Միությունից Հայաստանի անկախացումից հետո՝ 1991-ի դեկտեմբերին Հնդկաստանը ճանաչեց Հայաստանը որպես անկախ պետություն, իսկ 1992-ին ստորագրվեց երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման արձանագրությունը: Ապա 1999-ին Նյու Դելիում հիմնվեց հայկական դեսպանությունը, նույն թվականին Հնդկաստանը Երեւանում բացեց իր մշտական առաքելությունը:

Արձանագրության ստորագրումից հետո, ըստ Պանկաջ Սաքսենայի, երկկողմ հարաբերությունները բավականին առաջընթաց են գրանցել. «Ներկայումս տարբեր ոլորտներում ունենք գերազանց փոխըմբռնում, նույնիսկ միջազգային հետաքրքրություն ներկայացնող հարցերում մեր հայացքները համընկնում են»:

Պանկաջ Սաքսենան հիշում է՝ 2001-ին, երբ Հնդկաստանի Գուջարաթ նահանգում տեղի ունեցավ ավերիչ երկրաշարժ, Հայաստանը բարեկամ երկրին ցուցաբերեց ֆինանսական օգնություն եւ Հնդկաստան ուղարկեց 18 հայ մասնագետներից՝ սեյսմոլոգներից, ինժեներներից ու բժիշկներից կազմված խումբ՝ մասնակցելու հնդիկ ժողովրդին օգնելու աշխատանքներին:

Իսկ Հնդկաստանից երկրի զարգացմանն ուղղված աջակցություն Հայաստանը ստանում է ժամանակ առ ժամանակ, օրինակ՝ անցյալ տարի ԵՊՀ-ում բացվեց Տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների հայ-հնդկական կենտրոնը:

Զրուցակիցս ավելացնում է, որ Հայաստանը նաեւ ստանում է մարդկային ռեսուրսի զարգացմանն ուղղված աջակցություն, այսինքն՝ ամեն տարի տարբեր ոլորտների հայ մասնագետները մեկնում են Հնդկաստան՝ մասնակցելու ITEC ծրագրի առաջարկած կուրսերին: Իսկ Հնդկաստանից էլ ամեն տարի հնդիկ ուսանողներ են գալիս Երեւանի պետական բժշկական համալսարանում սովորելու, միայն 2011-ին Երեւանի բժշկական համալսարան ընդունվել են ավելի քան 450 հնդիկ դիմորդներ:

Պ. Սաքսենան ընդգծում է, որ երկկողմ առեւտրի ոլորտում նույնպես առաջընթաց ունենք, չնայած առաջընթացը կարող էր շատ ավելին լինել, քանի որ դրա համար երկու կողմերը բավարար ներուժ ունեն: Այնուամենայնիվ, վերջին տարիներին կայուն աճ է նկատվում. եթե 2005-ին երկու երկրների միջեւ առեւտրաշրջանառության ծավալները կազմում էին 16.5 միլիոն դոլար, ապա 2011-ին կազմել են 71.72 միլիոն դոլար: Սակայն երկկողմ առեւտուրն ու ներդրումները ընդարձակելու շրջանակը բավականին լայն է: «Պարզապես երկու երկրները պետք է ձեռնարկեն կոնկրետ քայլեր այս ուղղությամբ եւ առկա ներուժն օգտագործեն հօգուտ երկու ժողովուրդների», ավելացնում է Պանկաջ Սաքսենան:

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# Բագրատյանի օլիգարխիկ կապերը

*1-ին էջից*

Երբ Հայաստանի վարչապետ 2008-ին նշանակվեց Տիգրան Սարգսյանը, բոլորն էլ գիտակցում էին, որ նրա համար դժվար է լինելու՝ վերջինս օլիգարխներին սպասարկող թիմից չէր: Չնայած մամուլում տեղ գտած հսկայական կոմպրոմատային նյութերին, օլիգարխների կողմից սպասարկվող կուսակցությունների ու լրատվամիջոցների երկարամյա «պայքարին», Տիգրան Սարգսյանը դեռ վարչապետ է՝ անկախ իր ձախողումներից ու ձեռքբերումներից: Եվ եթե երկրում օլիգարխիկ տնտեսության դեմ քիչ թե շատ քայլեր ձեռնարկվել են, ապա դա եղել է հենց այս կառավարության օրոք, որին այդքան անշեղորեն քննադատում է Բագրատյանը: 101 միլիարդի ծրագիրը, շքեղության հարկը, վճարումների ոչ կանխիկ լինելու մասին օրենքն ու բազմաթիվ այլ նախաձեռնություններ ուղղված են հենց օլիգարխիայի ազդեցության կրճատմանը: Այս ամենը, վստահաբար, Բագրատյանը շատ լավ հասկանում է, սակայն կյանքի անձնական խնդիր է դարձրել քննադատել կառավարությանը՝ իրականում ոչ թե մոռանալով, այլ չխոսելով տնտեսության «հերն անիծած» իրական գործոնների մասին: Ստացվում է, որ Հայաստանի նախկին վարչապետը մեծ հաճույքով գործիք է դարձել մի քանի փողատերերի ձեռքին, ովքեր երազում են սեփական օգտագործման վարչապետ ունենալու տեսլականի մասին՝ դրա համար էլ հնարավորինս «քլնգելով» գործող կառավարությանը: Հայաստանի «թիվ մեկ տնտեսագետը», փաստորեն, դարձել է օլիգարխների խոսափողը, ուստի կամա թե ակամա պատասխանատվություն է կրում երկրում առկա հիվանդագին երեւույթների համար, որոնք, ի դեպ, սկսվեցին հենց իր կառավարության օրոք:

**ՎԼԱԴԻՄԻՐ Փ. ՊՈՂՈՍՅԱՆ**

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ

# Սիրիահայերը կազատվեն պետտուրքի վճարումից

**Հաշվի առնելով Սիրիայի ներկայիս պատերազմական իրավիճակը եւ քաղաքական հնարավոր զարգացումները, Սիրիայում բնակվող մոտ 100 հազար հայերին սպառնացող վտանգը, Հայաստանի կառավարությունը երեկ հավանություն տվեց «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու նախագծին, որով առաջարկվում է ազգությամբ հայ այն օտարերկրյա քաղաքացիներին, որոնց մշտական բնակության պետությունում ստեղծվել է այնպիսի արտակարգ իրավիճակ, որն սպառնում է նրանց կյանքին կամ առողջությանը, ազատել ՀՀ մուտքի արտոնագրի ժամկետը երկարացնելու համար պետական տուրքի վճարումից: Օրինագիծը կներկայացվի ՀՀ Ազգային ժողով: Ըստ վարչապետ Տիգրան Սարգսյանի. «Եթե ստեղծվում են արտակարգ իրավիճակներ, որոնց համար մեր հայրենակիցները մեղավոր չեն եւ չեն կարողանում պահպանել պաշտոնական ընթացակարգերը, ապա մենք նրանց ազատում ենք տույժ ու տուգանքից, ստեղծում ավելի հարմարավետ պայմաններ, որպեսզի նրանք իրենց խնդիրները կարողանան լուծել՝ մնալով հայրենիքում»:**

**Ա. Մ.**

# Մարալիկում շահագործման կհանձնվեն անապահովների համար կառուցված շենքերը

Հայաստանի կառավարությունը երեկ պահուստային ֆոնդից 15 մլն դրամ հատկացրեց Մարալիկ քաղաքի Շիրազի փողոցի սոցիալական բնակարանային ֆոնդ հանդիսացող չորս բնակելի շենքերի հարակից տարածքների բարեկարգման եւ կանաչապատման աշխատանքների իրականացման համար: Այս որոշման մասին լրագրողների հետ զրույցի ժամանակ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար **Արտեմ Ասատրյանը** նշեց, որ բնակարանային համալիրում արդեն սկսվել են գույքի տեղափոխման աշխատանքները: Առաջիկայում այստեղ կբնակվեն 59 ընտանիքներ, որոնցից 27-ը մանկատան շրջանավարտներն են, 32-ը՝ սոցիալապես անապահով անձիք: Բնակարանները շահագործման կհանձնվեն սեպտեմբերին:

**Ա. Մ.**

ԸՍՏ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻ

# Թուրքիայում տարեկան 60-70 իսլամացած հայ քրիստոնեության է վերադառնում

Կահիրեում լույս տեսնող «Ջահակիր» ազգային գրական եւ ընկերային շաբաթաթերթի օգոստոսի 9-ի համարը տեղեկացնում է, որ Պոլսո հայոց պատրիարքության պատրիարքական ընդհանուր փոխանորդ **Արամ արք. Աթեշյանը** «Ermenihaber.com»-ին տված հարցազրույցում հայտնել է, որ մինչեւ 1914 թվականը, Օսմանյան կայսրության սահմաններում գործել են 2170 եկեղեցիներ եւ շուրջ 2000 դպրոցներ: Հետագայում հայկական եկեղեցիների թիվը նվազել է 45-ի, իսկ դպրոցներինը՝ 13-ի:

«Հայ առաքելական եկեղեցու հավատացյալների կողքին ունենք նաեւ հայ կաթողիկե համայնք (500 հոգի): Առաքելական եկեղեցու հետեւորդների թիվը Թուրքիայում հասնում է 70 հազարի: Մենք գործող, աշխույժ համայնք ենք, համեմատած ազգային մյուս փոքրամասնությունների հետ: Օրինակ՝ ասորական համայնքը շուրջ 25 հազար է, հրեականը՝ 20 հազար, մյուսները՝ շատ ավելի նվազ», նշել է Աթեշյան արքեպիսկոպոսը:

Անդրադառնալով հայկական բոլոր պատմական եկեղեցիները պատրիարքարանի իրավասությանը վերադարձնելու խնդրին եւ թուրքական կառավարության չկամությանը, Աթեշյանն ասել է, թե պատրիարքարանը չունի այն նյութական միջոցները, որ անհրաժեշտ է բարեկարգելու այդ վնասված եկեղեցիները: «Բացի դրանից, ունենք նաեւ մարդուժի պակաս, որովհետեւ հոգեւորականների թիվը շատ քիչ է, 22-23 հոգի», ասել է նա, ավելացնելով, որ մեկ եկեղեցու վերականգնման համար անհրաժեշտ է մոտավորապես 1 միլիոն դոլար: «Նույնիսկ եթե պետությունը վերանորոգված եկեղեցին օգտագործում է որպես թանգարան կամ մշակույթի տուն, մենք հարցին մոտենում ենք այնպես, որ եկեղեցին փրկվեց իր ավերակ վիճակից ու ամբողջական կործանումից», նշել է նա:

Պատասխանելով իսլամացած հայերի դավանափոխության վերաբերյալ «Ermenihaber.com»-ի հարցին, Աթաշյանը տեղեկացրել է, որ նրանք հետեւում են քրիստոնեության, մկրտության եւ հայ լինելու մասին վեց ամսվա դասընթացների, որից հետո պաշտոնապես փոխում են անձնաթղթերը եւ գրանցվում որպես քրիստոնյաներ: Այնուհետեւ մկրտվում են եւ դառնում Հայ եկեղեցու անդամ: Ըստ նրա՝ տարեկան շուրջ 60-70 հոգի վերականգնում է իր քրիստոնեական ինքնությունը:

**Հ. Ծ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով լոյս տեսնող նիւթերը գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Արտեմ Դավթյան. «Պետք է վերացվի անջրպետը համայնքի ղեկավարի եւ բնակչի միջեւ»

Արարատի մարզի Այգեստան գյուղում եւս սեպտեմբերի 9-ին տեղի կունենան համայնքի ղեկավարի եւ ավագանու ընտրություններ: Այս գյուղը բավական մեծ է, 3 հազարից ավելի բնակչությամբ, 2194 ընտրողով:

Որպես համայնքի ղեկավարի թեկնածու առաջադրվել են երկուսը՝ գործող գյուղապետ Սոկրատ Հովսեփյանը եւ երիտասարդ տնտեսագետ, ՌԱԿ Հանրապետական վարչության դիվանի անդամ **Արտեմ Դավթյանը**, ով մինչեւ այժմ համայնքի ավագանու անդամ է եղել: Այս գյուղում, այդպիսով, այս պայքարն ընթանալու է ոչ միայն փորձառու եւ երիտասարդ հավակնորդների, այլեւ նոր ու հին մոտեցումների եւ աշխարհայացքների, արդեն աշխատած գյուղապետի արածի եւ դրան դիմակա երիտասարդ թեկնածուի նոր նախաձեռնությունների հակադրման ծիրում:

Ճիշտն ասած, զարմացանք՝ «Հայէկոնոմբանկում» վարկային մասնագետի աշխատանքը կարծես թե երիտասարդ տնտեսագետի սրտին ավելի մոտ պետք է լիներ, քան գյուղապետի պաշտոնին հավակնելը, սակայն Արտեմ Դավթյանն ասում է, թե իր գյուղը սիրում է եւ կուզենար բարեկեցիկ, ժամանակակից կյանքով ապրող համայնք տեսնել: Ու այդ պատճառով ձգտում է իր նախաձեռնություններն ու ծրագրերը գյուղապետ դառնալու միջոցով իրականություն դարձնել, որին, եթե ընտրվի, կնպաստեն իր մասնագիտական կրթությունը, երիտասարդ տարիքը, գյուղի պրոբլեմների լավ իմացությունը, որոնք Արտեմի կռվաններն են: Ճիշտ է, նա այժմ գործող ավագանու անդամ է, սակայն համոզված է, որ բոլոր խնդիրները լուծելիս ավելի օպտիմալ ու նորարարական մոտեցումների կարիքը կա, եւ կարճաժամկետ լուծումները պետք է փոխարինել հեռահար լուծումներով: Այդ կարգի խնդիրների մեջ նա տեսնում է ներգյուղային ճանապարհների բարեկարգումը, գյուղի լուսավորման խնդրի հիմնավոր լուծումը, գյուղի բավական մեծ թվով երիտասարդության համար զբաղմունքի եւ շփվելու հնարավորության ստեղծումը. «Գյուղում վախի մթնոլորտ կա, պայմանավորված նրանով, որ համայնքապետը կառավարում է խորհրդային դատախազական ոգով (գործող համայնքապետ Սոկրատ Հովսեփյանը նախկին դատախազ է), այդ մթնոլորտը պետք է վերացվի: Գյուղացին պետք է իմանա, որ համայնքի ղեկավարի մոտ գնում է ոչ թե խնդրելու, այլ դիմելու, որ այս կամ այն հարցը լուծվի: Այսինքն՝ համայնքի ղեկավարը պետք է համայնքի բնակիչների կողքին կանգնած լինի»: Մինչդեռ, օրինակ, ոռոգման ջրի բաշխումը մշտապես անարդար ձեւով է տեղի ունենում Այգեստանում, գյուղի 700 ընտանիքների զգալի մասի ջուրը ժամանակին չտալու պատճառով բերքը փչանում է: Մինչեւ գյուղապետի եւ նրա կողմնակիցների հեկտարները չեն ջրվում, նա ուրիշին ջուր չի տալիս: Նախ իր ծառն է ջրում փաստորեն: Իսկ համայնքապետ՝ նշանակում է նախ արդար ղեկավար: Ջրի հարցը ավելի բարձր մակարդակում պիտի լուծվի, պիտի տեղյակ լինեն, որ լուծեն, համոզված է Ա. Դավթյանը: Չնայած պատկառելի տարիքին՝ համայնքի ներկա ղեկավար Ս. Հովսեփյանը վերջին շրջանում է հանրապետական դարձել, իսկ Այգեստանի ավագանու անդամի 9 տեղի համար 9 հանրապետական է առաջադրվել: Արտեմ Դավթյանը փաստորեն ռիսկի է գնում՝ ավագանու անդամ չառաջադրվելով: Սակայն Արտեմը գտնում է, որ գյուղին փոփոխություններ են պետք, եւ դրա համար արժե ռիսկի դիմել: Նրա կարծիքով ՌԱԿ անդամ լինելը գաղափարական առումով դրական իմիջ է ավելացնում իր թեկնածությանը: Նա հույս ունի այգեստանցու սթափ մտածողության եւ իրենց կյանքը փոխելու ցանկության վրա, ինչպես նաեւ ազդեցիկ կուսակցությունների աջակցության. «Համայնքի բնակչության մի հոծ զանգված կա, որ ինձ է սատարում, ինձ աջակից են տեղի հատկապես երիտասարդները»:



Հարցին, թե իշխանական թեկնածուն առավել շանսեր ունի՝ ըստ Արտեմ Դավթյանի, այո, գուցե այդպես թվա՝ իշխանական ռեսուրսների, ֆինանսների տիրապետելու առումով, սակայն ինքն էլ աջակիցների պակաս չունի, քանի որ համայնքի բնակչության ինտելեկտուալ, կիրթ զանգվածն այնքան շատ է, որ նրանք իրավիճակը ճիշտ կգնահատեն եւ դժվար թե նման ազդեցությունների տակ ընկնեն: Իր դաշնակիցն է նաեւ իր երիտասարդ տարիքը՝ 27 տարեկան է, մինչդեռ գործող գյուղապետը բոլորել է յոթերորդ տասնամյակը:

Անդրադառնալով Արարատի մարզի միջին մակարդակի ապրելակերպ ունեցող Այգեստան գյուղի խնդիրներին, որտեղ զարգացած են բոստանային մշակումն ու անասնապահությունը, Արտեմ Դավթյանն ասում է, որ աշխատունակ տարիքի մարդկանց մի զգալի մաս Ռուսաստանի Դաշնություն է մեկնել՝ արտագնա աշխատանքի, մի մասն էլ Երեւանում շինարարական աշխատանքներում է զբաղված, այդպես գյուղի հոգսերը մի փոքր թեթեւանում են: Հարուստները, բնականաբար չեն կարող շատ լինել, միջինից ցածր խավն է գերակշռում: Գյուղի բնակչության սոցիալական խնդիրներին, ըստ Արտեմ Դավթյանի, ավելի արդար մոտեցումներ են պետք, իսկ թիվ մեկ քայլը, որ պետք է արվի այդ ուղղությամբ՝ վերացվի այն անջրպետը, անդունդը, որը կա համայնքի բնակիչների եւ ղեկավարի միջեւ: Պետք է գյուղապետը ծառայի ժողովրդին ու գյուղի խնդիրները լուծի:

«Եթե համայնքի ղեկավար ընտրվեմ՝ բազմաթիվ ծրագրեր ունեմ իրականացնելու՝ անվճար բուժօգնությունը բնակիչներին հասանելի դարձնելուց սկսած մինչեւ մատչելի գներով թունաքիմիկատների հայթայթում, ոռոգման ջրի հավասար բաշխում եւ բազմաթիվ այլ խնդիրների լուծում», խոստանում է համայնքի ղեկավարի երիտասարդ թեկնածուն:

**Ս. Խ.**

ԸՆԴԴԵՄ ԷՔՍՏՐԱԴԻՑԻԱՅԻ

# Հանցագործ-դրոշակ

*1-ին էջից*

**Փաստորեն գործ ունենք բացահայտ հանցագործի հետ (եթե այլ տերմիններով չդիմենք - Հ. Ա.), ում ինտելեկտի գործակիցն աննախանձելի է, որը ադրբեջանցի է, ում հարեւան երկրում շատերը երկրպագում են այնպես, ինչպես Մովսեսին «կորցրած» հրեաները ժամանակին անապատում երկրպագում էին ոսկե ցլիկին, ու ինչի արդյունքում Ադրբեջանը պետական, կիսապետական, հասարակական տարբեր խողովակներում փորձում է հասնել նրան, որ «Ռամիլ Սաֆարովն իր հետագա պատիժը հայրենիքում կրի»:**

**Երեկ լրագրողներին հանդիպել էին Լարիսա Ալավերդյանը, որը ՄԻՊ աշխատած տարիներից դեռեւս մեծ ակտիվություն է ցուցաբերում այս հարցում, եւ Բուդապեշտում Գուրգեն Մարգարյանի իրավահաջորդների շահերի պաշտպան Նազելի Վարդանյանը: Տիկնայք տեղեկացրին, որ Սաֆարովի էքստրադիցիան թույլ չտալու նպատակով կազմակերպվում է ստորագրահավաք, որին արդեն իսկ միացել են ավելին քան 80 ՀԿ-ներ, սակայն այս ամենը տեղի է ունենում Հայաստանի Հանրապետության տարօրինակ պասիվության համապատկերում: Այնինչ, բանախոսների դիտարկմամբ, ՀՀ-ն կարող է պաշտոնապես հարցում կատարել Հունգարիայի պետական մարմիններին, որպեսզի պարզի, թե արդյոք սկսվե՞լ է Սաֆարովի էքստրադիցիայի գործընթացը. հունգարական կողմը նման հարցման պարագայում պարտավոր է խոստովանել՝ այո կամ ոչ:**

**Այս հանգամանքի պարզումն անհրաժեշտ է, քանի որ եթե գործընթացն այսօր սկսվել է, իսկ ինչպես փաստաբան Վարդանյանը նկատեց՝ «անգամ ամենաերկար գործընթացներ ցանկության պարագայում կարճեցվում են», ու եթե դրա հետեւանքով Սաֆարովի էքստրադիցիան Ադրբեջան ի վերջո իրականություն դառնա, ինչի հավանականությունն, ըստ Լարիսա Ալավերդյանի, «միջինից բարձր է այսօր», ապա Հայաստանն արդեն post factum իրավիճակում ոչինչ անել չի կարող, քանի որ դա այլեւս Հունգարիա-Ադրբեջան երկկողմանի հարց կդիտարկվի: «Համաձայն միջազգային կոնվենցիայի, երբ տվյալ երկիրը հանցագործին հանձնում է մեկ այլ երկրի, ուրեմն հենց այդ պահից դադարում է իրականացնել տվյալ հանցագործի դատավճիռը», ասաց փաստաբան Վարդանյանը: Այսինքն, եթե Հունգարիան ի վերջո Սաֆարովին հանձնում է Ադրբեջանին, ապա հենց այդ պահից որեւէ իրավասություն չունի Սաֆարովի դատավճռի հետագա կատարման առումով: Ասել է թե, եթե արդեն Ադրբեջանում Սաֆարովն ազատ արձակվի, իսկ դա հենց այդպես էլ կլինի նրա էքստրադիցիայի պարագայում, ապա Հունգարիան իրավասություն չի ունենա պահանջելու դատավճռի կատարումը:**

**Ակնհայտ է, որ Ադրբեջանը հենց սրան է գնում, մասնավորապես ակտիվացնելով կապերը տնտեսական լուրջ խնդիրներ ունեցող այսօրվա Հունգարիայում, սակայն գոյություն ունի պետությունների միջազգային պատասխանատվության մասին կոնվենցիա եւս, որի 11-րդ հոդվածում ասված է. «Այն պետությունը, որը մասնավոր անձի արարքն ընդունում է որպես իրենը, կրում է նաեւ տվյալ մասնավոր անձի արարքի համար նախատեսված պատասխանատվությունը»: Ապացուցման կարիք թերեւս չունի, որ Սաֆարովի արարքը Ադրբեջանն ընդունում է որպես իրենը, դրա մասին են վկայում հարեւան երկրի տարբեր աստիճանի պաշտոնավորների պարգեւական այցերը Սաֆարովի խուց, այնուհետեւ այդ «մեծ իրադարձության» մասին լուսանկարների հրապարակումը: Փաստաբան Վարդանյանը տեղեկացրեց, որ դատական գործընթացից ինքը մեկ անգամ չէ, որ համոզվել է՝ «Սաֆարովը կատարել է պետական պատվեր», ուրեմն ապացուցելի է, որ Սաֆարովի արարքը որպես սեփականն ընդունելով Ադրբեջանը եւս պատասխանատու է այդ արարքի համար, որը հունգարական չեզոք դատարանը որակել է որպես հանցագործություն՝ սահմանելով ցմահ ազատազրկումը որպես պատասխանատվության տեսակ:**

**Կարո՞ղ է Հայաստանն արդեն post factum իրավիճակում սկսել Ադրբեջանին Սաֆարովի արարքը որպես սեփականն ընդունելու մեղադրանք ներկայացնել, ըստ Լարիսա Ալավերդյանի՝ կարող է, բայց ինչպես Ալավերդյանը, այնպես էլ փաստաբան Վարդանյանը միակարծիք են՝ անհրաժեշտ է ակտիվություն ցուցաբերել հիմա՝ թույլ չտալու էքստրադիցիան. «Մինչեւ այժմ հունգարական դատարանում չկա նախադեպ, երբ նման դաժան հանցագործները էքստրադիցիայի ենթարկվեն, սակայն սա չի նշանակում, որ մենք պետք է հանգիստ նստենք կամ խուճապի մատնվենք, պետք է պարզապես ակտիվություն ցուցաբերել», ասաց Վարդանյանը՝ ընդգծելով, որ այս գործընթացում իրենց անելիքն ունեն ՀՀ արդարադատության, ԱԳ նախարարություններն ու հասարակական կազմակերպությունները:**

# Կապանի քաղաքապետի թեկնածու Արթուր Աթայանը հրաժարվեց պայքարից

Զարմանալի, իսկ գուցե շատ էլ «բնականոն» բաներ են կատարվում Հայաստանում. մի կողմից ՀՀԿ-ն խոսում է, որ պատրաստ է քայլ անել բոլոր կուսակցությունների հետ երկխոսելու ուղղությամբ, մյուս կողմից գործնական կյանքը բոլորովին այլ օրինակներ է մատուցում. երեկ, օրինակ, թիվ 38 ԸԸՀ-ին ինքնաբացարկի դիմում է ներկայացրել Կապանի քաղաքապետի թեկնածու, քաղաքապետի պաշտոնի հիմնական հավակնորդ համարվող եւ դեռեւս գործող քաղաքապետ, ՀՅԴ անդամ Արթուր Աթայանը: Կապանում չորս թեկնածու էին առաջադրվել, երկու անկուսակցական (նրանք եւս ավելի վաղ ինքնաբացարկ էին հայտնել), մեկ ՀՀԿ-ական եւ մեկ ՀՅԴ-ական: ՀՀԿ-ի թեկնածուն «Հայփոստ» ՓԲԸ Կապանի մասնաճյուղի տնօրեն Աշոտ Հայրապետյանն է: Արթուր Աթայանը նաեւ հայտարարություն է տարածել, որտեղ իր առաջադրման հիմքը 4 տարվա լավ աշխատանքը համարելով եւ ծրագրերն առաջիկայում շարունակելու անհրաժեշտությունը դիտարկելով՝ նշել է Կապանում օրեցօր շիկացող նախընտրական մթնոլորտի եւ հոգեբանական-ֆինանսական անընդունելի ճնշումների մասին, որոնց ենթարկվում են կապանցիք եւ հատկապես իր կողքին կանգնած մարդիկ. «Ինձ համար քաղաքապետի աթոռը ինքնանպատակ չէ, ու ես չեմ կարող նման ծանր բեռով շարունակել ընտրապայքարն ու վտանգի տակ դնել մարզկենտրոնի բարոյահոգեբանական մթնոլորտն ու միջանձնային հարաբերությունները: Ես չեմ ուզում, որ իմ պատճառով տուժեն իմ ընկերներն ու համախոհները: Ես չեմ կարող թույլ տալ, որ իմ ծննդավայրում հաստատվեն թշնամանքն ու դավաճանությունը: Համոզված եմ, որ հազարավոր կապանցիներ համամիտ են ինձ հետ ու չեն մեղադրի ինձ: Ես ուզում եմ հավատալ, որ այս օրերին հնչող հայտարարությունները, թե մեկ տարի հետո մենք ունենալու ենք անճանաչելիորեն բարեփոխված Կապան, իրականություն կդառնան: Ու եթե դրան խոչընդոտում է միայն իմ կուսակցական պատկանելությունը, ապա ես նպատակահարմար եմ գտնում զիջել իմ տեղը: Հանուն Կապանի եւ հանուն կապանցու ես հրաժարվում եմ ընտրապայքարից»:

Ի՞նչ զգացումով եք համակվում այսպիսի հայտարարություն կարդալով: Ճիշտ է, ամոթի եւ անարդարության զգացումով: Մանավանդ նրանք, ովքեր շփվում են կապանցիների հետ ու տեղյակ են, որ Արթուր Աթայանի կրկին ընտրվելու շանսերը մեծ էին, ու անկախ կուսակցական պատկանելությունից՝ նրան կապանցիները լավ ղեկավար են դիտում, իսկ Ա. Աթայանի ինքնաբացարկի բուն պատճառը նրանք Սյունիքի հայտնի սկանդալային մարզպետ Սուրիկ Խաչատրյանի ճնշումներն են համարում:

**Ս. Խ.**

**Հ.Գ. - Երեկ ՀՀԿ նիստից առաջ ՀՀԿ մամուլի խոսնակ Էդուարդ Շարմազանովից խնդրեցինք մեկնաբանել այն լուրերը, որ Արթուր Աթայանը Սյունիքի մարզպետի ճնշումների պատճառով է ինքնաբացարկ հայտնել. «Ես ծանոթացել եմ Աթայանի հայտարարությանը: Ինձ մոտ այնպիսի տպավորություն է, որ հարգարժան քաղաքապետը համոզվել է, թե չի կարող առավելության հասնել հարգարժան քաղաքապետի հանդեպ, դրա համար հանել է իր թեկնածությունը: Իսկ ինչ վերաբերում է ճնշումներին՝ Սուրիկ Խաչատրյանը կողմից, վերջինս Հանրապետական կուսակցության անդամ է, Հանրապետական կուսակցությունը քաղաքականության մեջ ճնշումների ճանապարհով չի գնում, այլ գնում է քաղաքական դիալոգի ճանապարհով», ասաց ՀՀԿ մամուլի խոսնակը:**

# Հայաստան-Ղազախստան. համագործակցության եւ փոխըմբռնման քսան տարին

Անցնող շաբաթը նշանավորվեց Հայաստանի Հանրապետության եւ Ղազախստանի Հանրապետության միջեւ դիվանագիտական հարաբերությունների քսանամյակին նվիրված միջոցառումներով: Հայ կինոսիրողները կարողացան մի քանի օր վայելել ղազախական լավագույն կինոֆիլմերը: Օգոստոսի 29-ին «Անի-պլազա» հյուրանոցում հաջողությամբ անցավ երկկողմ հարաբերությունների ներկայի ու հեռանկարներին նվիրված ներկայանալի կոնֆերանս, որին մասնակցում էին հյուրեր Ղազախստանից, Հայաստանի խորհրդարանի պատգամավորներ եւ արտգործնախարարության բարձրաստիճան ներկայացուցիչներ, արտասահմանյան դեսպաններ, հասարակական կազմակերպությունների ու գիտակրթական հաստատությունների ղեկավարներ: Այս ձեռնարկները լուսաբանվեցին հայկական ու ղազախական, նաեւ ռուսաստանյան ու արեւմտյան ԶԼՄ-ներով, եւ դա հասկանալի է: Եվրասիական տարածքում ծավալվող ինտեգրացիոն գործընթացների լույսի ներքո նման միջոցառումները սկսել են տեղեկատվական հետաքրքրություն ներկայացնել: Անցնող շաբաթը լավ առիթ էր քննարկելու Կենտրոնական Ասիայի խոշորագույն եւ ամենադինամիկ զարգացող պետության՝ Ղազախստանի հետ մեր հարաբերությունների արդի վիճակը եւ զարգացման տեսանելի հեռանկարները:

### Համագործակցություն եւ փոխադարձ հետաքրքրություն

Հայաստանն ու Ղազախստանը Անկախ պետությունների համագործակցության եւ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության հիմնադիր անդամ պետություններ են: Երկուսի մասնակցությունն էլ այդ կառույցներին անցնող բոլոր տարիներին եղել է կառուցողական եւ արդյունավետ: Կարծես անցնում են իննսունականների սկզբների համար մոդայիկ այն խոսակցությունները, ըստ որոնց ԱՊՀ-ն լոկ քաղաքակիրթ ապահարզանի մի ձեւ է եւ կոչված է ապահովելու ԽՍՀՄ փլուզման պայմաններում կայունության ապահովումը հետխորհրդային տարածքում: Այսօր Ռուսաստանի, Ղազախստանի եւ Բելառուսի միջեւ ծավալվում են ինտեգրացիոն գործընթացներ, որոնց նպատակը 2014 թ. Եվրասիական միության ձեւավորումն է: Այդ միության հետ Հայաստանի համագործակցության հեռանկարների թեման վերջերս արդիական է դարձել մեր քաղաքական ու հասարակական շրջանակներում, եւ այս մասին մենք դեռ կխոսենք: Հիշեցնենք, որ եկող շաբաթ Հայաստանում մեկնարկում է ՀԱՊԿ օպերատիվ արձագանքման կոլեկտիվ ուժերի զինավարժանքը, եւ դա մի նոր տեղեկատվական առիթ կլինի ՀԱՊԿ-ի՝ հարավկովկասյան տարածաշրջանում ունեցած ռազմաքաղաքական հետաքրքրությունների մասին խոսելու համար:

Հայաստանի եւ Ղազախստանի միջեւ քաղաքական երկխոսության մակարդակը բնորոշվում է իբրեւ շատ բարձր եւ փոխըմբռնման ու փոխադարձ հարգանքի վրա կառուցված: Ղազախստանի մայրաքաղաքը առնվազն մի քանի առիթներով Հայաստանին կենսականորեն հետաքրքրող քննարկումների բեմահարթակ է եղել, եւ դրանցից ամենանշանակալիցը 2009 թվականին ավելի քան իննամյա ընդմիջումից հետո գումարված ԵԱՀԿ գագաթաժողովն էր, որտեղ, ինչպես հայտնի է, կարեւոր հայտարարություններ ընդունվեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի հետագա ծավալման վերաբերյալ:

Հայաստանի եւ Ղազախստանի ուղիղ ապրանքաշրջանառության ծավալները մեծ չեն՝ տարեկան մոտ տասը մլն ԱՄՆ դոլար: Սակայն եթե նկատի ունենանք այն ապրանքները, որոնք Հայաստան են հասնում երրորդ երկրների միջոցով, այդ ծավալը կարող է հասնել ընդհուպ հարյուր միլիոնի: Հայտնի է, որ ղազախական խոշորագույն ԲՏԱ բանկի ներդրումները Հայաստանում վերջին յոթ տարիներին կազմել են 50 մլն դոլար: Մեր երկրում գործում են քսանից ավելի հայ-ղազախական համատեղ ձեռնարկություններ, եւ մասնագետները համոզված ասում են, որ գալիք տարիներին դրանց թիվը կարող է շեշտակի ավելանալ: Հասունացել է հայ-ղազախական գործարար ֆորում հրավիրելու գաղափարը, որտեղ խոշոր եւ միջին բիզնեսի ներկայացուցիչները կքննարկեին իրենց ջանքերը համատեղելու հնարավորությունները: Արդեն այսօր ակնհայտ է, որ այդ համագործակցությունը կարող է ծավալվել հատկապես նորարարությունների եւ բարձր տեխնոլոգիաների ոլորտներում:

Եվրասիական ինտեգրացիայի ծավալումը, բացի շահագրգիռ քննարկումներից, խոր ուսումնասիրության եւ նույնիսկ վիճաբանությունների նյութ է դառնում մեզանում: Այդ միության գաղափարի հակառակորդները պնդում են, որ դա ԽՍՀՄ վերակենդանացման մի փորձ է եւ տուրք ծավալապաշտական գաղափարներին: Նրանք կոչ են անում պարզապես չշեղվել ավելի վաղ հռչակված եվրոպական ինտեգրացիայի գործընթացից: Եվրասիական միության կողմնակիցները, ընդհակառակը, կարծում են, որ դա կարող է էական դրական ազդեցություն ունենալ Հայաստանի տնտեսության աշխուժացման վրա: Ամեն դեպքում, ես ասել եւ կրկնում եմ. չարժե այս բանավեճը թեժացնել քաղաքական դաշտում, ինչը կարող է պատճառ դառնալ ավելորդ լարվածության եւ, խոշոր հաշվով, մեր թուլացման: Չէ՞ որ երկու գաղափարների կողմնակիցներն ու հակառակորդներն առկա են քաղաքական դաշտի բոլոր հիմնական ճամբարներում: Եվ քանի դեռ քաղաքական սեզոնը Հայաստանում նոր է սկսվում, եւ հիմնական քննարկումներն ու բանավեճերը դեռ առջեւում են, պարզապես կուզենայի ձեւակերպել այդ քննարկումների հասունացած հարցաշարը: Հնարավո՞ր է արդյոք եվրասիական ինտեգրացիայի գործընթացը համատեղել եվրոպական ինտեգրացիայի գործընթացի հետ, եւ իրատեսակա՞ն է դա արդյոք: Հնարավո՞ր է արդյոք Հայաստանի ավելի սերտ մասնակցությունը Ռուսաստանի, Ղազախստանի եւ Բելառուսի միջեւ ձեւավորված Մաքսային միությանը (այդ հարցը իրենց նախարարներին հանձնարարել են ուսումնասիրել Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահները օգոստոսի 8-ին Մոսկվայում կայացած հանդիպման ժամանակ), եթե նկատի ունենանք, որ Հայաստանն, ինչպես, սահմաններ չունի Մաքսային միության տարածքի հետ: Կուժեղացնի՞ արդյոք Հայաստանի դրական, կառուցողական մասնակցությունը եվրասիական գործընթացներին Ռուսաստանի Դաշնության եւ նրա դաշնակիցների դիրքերը Եվրոպական միության հետ ավելի սերտ, ռազմավարական գործընկերային հարաբերություններ հաստատելու ջանքերում, որի արդյունքում կարող է միս ու արյուն ստանալ Լիսաբոնից մինչեւ Վլադիվոստոկ Մեծ Եվրոպայի հռչակված տեսլականը: Ինչպե՞ս կկարգավորվի Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, եթե եվրասիական ինտեգրացիայի ալիքները հասնեն Հարավային Կովկաս: Ահա մի քանիսն այն հարցերից, որոնց պատասխանների շուրջը հետաքրքիր կլիներ լսել ոչ միայն քաղաքական գործիչների, այլեւ տնտեսագետների, հասարակական ակտիվիստների, գիտության, կրթության ու մշակույթի գործիչների, երիտասարդության ներկայացուցիչների տեսակետները: Ամեն դեպքում արդեն այսօր հստակ է, որ հասունացել է հայաստանցի եւ ղազախստանցի գիտնականների, վերլուծաբանների եւ մշակույթի մարդկանց համագործակցության հարցը: Չէ՞ որ բոլոր վերոհիշյալ, ինչպես նաեւ շատ այլ հարցեր կենսական հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն մեզ, այլեւ ղազախստանցիների համար: Համագործակցության առանձին հաջող օրինակներ խոսում են այն մասին, որ, օրինակ՝ մեզանում լույս տեսնող բարձր վարկանիշ ունեցող «21-րդ դար» վերլուծական ամսագիրը կամ «Միջազգային հարաբերություններ. Հայկական աշխարհ» քաղաքագիտական հանդեսը կարող են պատշաճ հարթակ հանդիսանալ հայ եւ ղազախ հետազոտողների համատեղ ուսումնասիրությունների համար: Հարավային Կովկասի ամենաբարձր վարկանիշն ունեցող Երեւանի պետական համալսարանի եւ միջազգային բարձր հեղինակություն ունեցող Ղազախստանի Լեւ Գումիլյովի անվան եվրասիական համալսարանի միջեւ վերջին տարիներին ծավալված բացառիկ արդյունավետ համագործակցության մասին նույնպես շատերը գիտեն: Վերոհիշյալ կոնֆերանսում միահամուռ կարծիք հայտնվեց, որ այդ համագործակցությունն ավելի խորացնելու լուրջ հիմքեր կան, եւ դրանից գիտական աշխարհը միայն կշահի:

### Մեր ակնկալիքը բարեկամ Ղազախստանից

Հայաստանը եւ Ղազախստանը համագործակցել եւ համագործակցում են ոչ միայն ԱՊՀ եւ ՀԱՊԿ հարթակներում, այլեւ ԵԱՀԿ-ի, ՄԱԿ-ի եւ այլ միջազգային կազմակերպությունների շրջանակներում: Այդ արդյունավետ համագործակցությունը թույլ է տալիս եզրակացնել, որ կարելի էր ակնկալել Ղազախստանի ավելի մեծ ներգրավվածությունը Հայաստանին հուզող արտաքին քաղաքական հիմնախնդիրների լուծման գործում: 2008 թվականին Աստանայում անցած ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի ժամանակ բազմաթիվ երկրների քաղաքական գործիչներ առաջին անգամ բարձրաձայնեցին այն տեսակետը, որ իր տնտեսական զարգացման տեմպերի, իրականացվող բարեփոխումների, ազգամիջյան համերաշխության եւ կրոնական հանդուրժողականության շնորհիվ Ղազախստանը տեսանելի հեռանկարում լրջորեն կհավակնի տարածաշրջանային տերության կարգավիճակի: Այդ գաղափարն ամրապնդվեց, երբ Ղազախստանը սկսեց միաժամանակ ավելի կարեւոր դեր խաղալ Իսլամական համագործակցության կազմակերպության եւ Թյուրքալեզու երկրների համագործակցության կազմակերպության շրջանակներում: Համոզված եմ, որ մենք կարող ենք ակնկալել մեր բարեկամ եւ գործընկեր Ղազախստանից ստանձնելու յուրատեսակ միջնորդի դեր մեր եւ ԻՀԿ փոխհարաբերություններում, որտեղ Հայաստանը փաստորեն ներկայացված չէ: Այդտեղ Ադրբեջանը Թուրքիայի եւ էլի մի քանի երկրների աջակցությամբ անցած տարիներին բոլոր հնարավոր ջանքերը գործադրել է Հայաստանը սեւացնելու, մեկուսացնելու եւ դատապարտելու համար: Կարծում եմ, մենք հիմքեր ունենք ակնկալելու Ղազախստանի աջակցությունը մեր քաղաքական գործիչների, դիվանագետների եւ քաղաքագետ վերլուծաբանների այն ջանքերին, որոնք նպատակաուղղված են ԻՀԿ համապատասխան ինտելեկտուալ կենտրոնների հետ երկխոսության միջոցով այդ դժնդակ կարծրատիպը քայքայելու եւ ջարդելու շնորհակալ գործին: Այս լավատեսությունը հիմնված է նաեւ Ղազախստանի այն կառուցողական դերի վրա, որի ջանքերով «Իսլամական կոնֆերանս» անվանումը փոխարինվեց «Համագործակցության կազմակերպություն» անվանումով, ինչը ենթադրում է ջանքերի ուղղորդում դեպի համագործակցություն եւ երկխոսություն, այլ ոչ թե դեպի առճակատում: Նույնը վերաբերում է նաեւ Թյուրքալեզու երկրների կազմակերպությանը, որտեղ անցնող բոլոր տարիներին Ադրբեջանը եւ Թուրքիան արել են ամեն հնարավորը հակահայկական տրամադրություններ բորբոքելու համար: Ուզում եմ հիշեցնել, որ Ամենայն հայոց Գարեգին Երկրորդ կաթողիկոսը եւ Անդրկովկասի մահմեդականների հոգեւոր առաջնորդ Ալլահշուքյուր Փաշազադեն վերջերս հաստատեցին, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը քաղաքական հակամարտություն է, բայց ոչ մի դեպքում՝ կրոնական: Բայց սա չի խանգարում, որ Ադրբեջանը չդադարեցնի իր տոտալ-հակահայկական գործունեությունը վերոհիշյալ կազմակերպություններում: Ես ելնում եմ նաեւ այն իրողությունից, որ թյուրքական աշխարհը մի մեծ մոնոլիտ չէ, որի գլխին կանգնած է Թուրքիան, ինչպես դա փորձում էին մատուցել ԽՍՀՄ փլուզումից հետո: Այսօր թյուրքական աշխարհն առնվազն բազմակենտրոն (պոլիցենտրիկ) է եւ Ղազախստանի ու Թուրքմենստանի հայկական համայնքների աճն ու համահունչ զարգացումը այդ հասարակություններում, նաեւ այդ պետությունների համագործակցությունն ու բարեկամությունը Հայաստանի հետ գալիս են ջախջախելու այն կարծրատիպը, թե թյուրքական աշխարհը դեմ է հայերին ու Հայաստանին: Հայաստանը վերջին տարիներին դեմ է եղել ԹԵԿ-ի անդամակցությանը միջազգային կարեւոր կազմակերպություններին, որովհետեւ Ադրբեջանի եւ Թուրքիայի կեցվածքը դրանցում եղել է սկզբունքորեն անընդունելի մեր պետության համար: Այս փակուղու հաղթահարմանը եւ երկխոսության ծավալմանը կարող էր նպաստել նաեւ Ղազախստանը՝ ինչ-որ հարմար պահի:

### Հայերը Ղազախստանում հյուրեր չեն

ԽՍՀՄ փլուզումից հետո Ղազախստանը Հայաստանի համար կարեւորվեց նաեւ այնտեղ արագորեն ձեւավորված խոշոր հայկական համայնքով: Պաշտոնական տվյալներով՝ Ղազախստանում ապրում է ավելի քան երեսուն հազար հայ, սակայն բոլոր հիմքերը կան պնդելու, որ հայերի փաստացի թիվն առնվազն երկու անգամ ավելի է: Ղազախական տասնմեկ քաղաքներում գործում են հայկական մշակութային կենտրոններ, իսկ Ալմաթիում օծվել է նաեւ հայկական եկեղեցի: Ղազախահայերն ասում են, որ շուտով մի եկեղեցի էլ կկառուցվի մայրաքաղաք Աստանայում: Բոլոր հայկական մշակութային կենտրոններում գործում են կիրակնօրյա դպրոցներ: Ղազախստանի հայերը լայնորեն ներկայացված են գործարարության, գիտության, կրթության եւ մշակույթի ոլորտներում: Հայերը Ղազախստանի լիարժեք քաղաքացի են եւ օգտվում են ազգամիջյան խաղաղության ու համերաշխության բոլոր պտուղներից: Հայ առաքելական եկեղեցին պատվավոր կերպով ներկայացված է Աստանայում պարբերաբար հրավիրվող աշխարհի ավանդական եկեղեցիների առաջնորդների խորհրդաժողովներում եւ սա այն հարթակն է, որտեղ մեր հոգեւոր հայրերը խաղաղության ու միջմշակութային երկխոսության բանակցություններ են վարում աշխարհի նշանավոր կրոնական առաջնորդների հետ: Կան հիմնախնդիրներ: Հայտնի պատճառներով չի գործում նախկին ԽՍՀՄ տարածքում բանուկ երկաթուղային կապը, որը Հարավային Կովկասը կապում էր Ռուսաստանի եւ Ղազախստանի հետ: Ճիշտ է, ղազախները վեց ամիս հետո շահագործման կհանձնեն երկաթուղու մի հատված, որով ղազախական երկաթուղին կկապվի իրանականի հետ: Այնպես որ Հայաստան-Իրան երկաթուղու շինարարությունը լրացուցիչ իմաստ է ձեռք բերում: Առ այսօր չեն գործում մեր մայրաքաղաքներն իրար կապող ուղիղ ավիաչվերթեր, եւ չնայած Աստանայից ու Ալմաթիից Երեւան հասնելու համար անհրաժեշտ է 14 ժամ, Հայաստանի բուհերում մի քանի հարյուր Ղազախստանի քաղաքացի հայեր են սովորում, իսկ բազմաթիվ հայաստանցիներ ու ղազախստանցիներ շարունակում են պահպանել մշտական ազգակցական ու բարիդրացիական կապեր: Ղազախ վերլուծաբաններից մեկը դիպուկ նկատել է, որ հայաստանցիների համար Ղազախստանում գործելու եւ ծավալվելու ամենանպաստավոր պայմանը ղազախահայ կենսունակ ու աշխույժ համայնքի գոյությունն է:

Դեպի Կենտրոնական Ասիա եւ Ղազախստան է ուղղված ամբողջ աշխարհի ուշադրությունը, որպես պոտենցիալ շատ հարուստ տարածաշրջանի: Մենք պետք է ավելի լավ ճանաչենք Ղազախստանը եւ փնտրենք փոխադարձ շահերն ու օգուտները: Բոլոր հիմքերը կան պնդելու, որ հայ-ղազախական համագործակցության զարգացման համար շատ լուրջ հնարավորություններ կան:

ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ
Քաղաքական վերլուծաբան,
բանասիրական գիտությունների
թեկնածու

# Թեհրանում Մուրսիի ելույթի ժամանակ սիրիական պատվիրակությունը լքել է դահլիճը

*Ստեղծվել է Սիրիայի խնդրով զբաղվող խումբ*



Թեհրանում անցկացվող Չմիանալու շարժման երկրների գագաթաժողովում երեկ ելույթ ունեցողներից մեկը Եգիպտոսի նախագահ Մուհամմեդ Մուրսին էր: «Ալ Արաբիա» հեռուստաալիքը հաղորդում է, որ նա հանդես է եկել ի պաշտպանություն «խիզախ պաղեստինցիների եւ սիրիացիների, որոնք պայքարում են ընդդեմ բռնակալության ու ճնշման»:

«Մենք համերաշխ ենք սիրիական ժողովրդի պայքարին՝ ընդդեմ օրինականությունը կորցրած դաժան վարչակարգի: Դա ոչ միայն քաղաքական նպատակահարմարություն է, այլեւ մեր բարոյական պարտքն է», հայտարարել է Մուրսին:

Նրա խոսքերով, Եգիպտոսը բացեիբաց պաշտպանում է նրանց, ովքեր Սիրիայում պայքարում են հանուն ազատության եւ ժողովրդավարության, իսկ այդ պայքարի շնորհիվ երկրում պետք է հաստատվի ժողովրդի շահերն արտահայտող համակարգ:

Մուրսիի այս խոսքերից հետո սիրիական պատվիրակությունը ցուցադրաբար լքել է նիստերի դահլիճը:

Մուրսիից առաջ ելույթ էր ունեցել Իրանի գերագույն առաջնորդ, մեծ այաթոլլահ Ալի Խամենեին, որի ելույթի զգալի մասը նվիրված էր Իսրայելի քննադատությանը:

1979 թ. Իսլամական հեղափոխությունից հետո առաջին անգամն է, որ Եգիպտոսի նախագահն այցելում է Իրան: Երկկողմ դիվանագիտական կապերը մինչեւ օրս խզված են: 2011-ին Իրանի իշխանությունները ողջունեցին եգիպտական հեղափոխությունը, իսկ այս տարի Մուրսիի նախագահի ընտրվելուց հետո հույս հայտնեցին, որ երկկողմ շփումները կվերականգնվեն: Սակայն խնդիրը բարդանում է նրանով, որ Թեհրանը պաշտպանում է Սիրիայի կառավարությանը, իսկ Կահիրեն, փաստորեն Արեւմուտքին ձայնակցելով, բռնել է սիրիական ընդդիմության կողմը:

Չմիանալու շարժման գագաթաժողովին մասնակցում են 120 պետությունների պատվիրակություններ: Ներկա է նաեւ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը, որն իր ելույթում անհրաժեշտ է համարել Իրանի մասնակցությունը Սիրիայի հակամարտության խաղաղ կարգավորմանը:

Գագաթաժողովում քննարկման գլխավոր թեմաներն են Իրանի միջուկային ծրագիրը եւ Սիրիայի հակամարտության կարգավորումը: Խոսվում է նաեւ մարդու իրավունքների, Իրաքի, Պաղեստինի, Աֆղանստանի խնդիրների, Աֆրիկայի եւ Լատինական Ամերիկայի զարգացման սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների մասին:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ Իրանի եւ մի շարք այլ երկրների նախաձեռնությամբ Թեհրանում որոշվել է հատուկ խումբ ստեղծել Սիրիայի ճգնաժամի լուծումներ գտնելու նպատակով: Այդ մասին երեկ հայտարարել է Իրանի արտգործնախարար Ալի Աքբար Սալեհին: Խմբի 3 գլխավոր անդամները պետք է լինեն Չմիանալու շարժման նախորդ, ներկայիս եւ ապագա ղեկավարները, այսինքն՝ Եգիպտոսը, Իրանը եւ Վենեսուելան: Կմասնակցեն նաեւ Լիբանանի եւ Իրաքի ներկայացուցիչները: Խումբը կփորձի կապեր հաստատել Սիրիայի կառավարության եւ ընդդիմության միջեւ, միասնական լուծում գտնել սիրիական ճգնաժամից:

Խումբը, որը ոչ պաշտոնապես «եռյակ» է կոչվում, կհամագործակցի Սիրիայի հարցով զբաղվող ուրիշ միջազգային կազմակերպությունների հետ: Սակայն խմբի գործունեությունը, ըստ երեւույթին, կբարդանա այն պատճառով, որ «եռյակի» անդամներից Եգիպտոսը բացահայտորեն պաշտպանում է սիրիական ընդդիմությանը:

ԿՐՈՆԱԱԶԳԱՅՆԱՄՈԼ

# «Մեր մզկիթները աղոթատեղի են, իսկ այլ կրոնների աղոթատեղիները՝ մեհյան»

**Օրերս Յալովայում կրոնական գործերի գերատեսչության ղեկավար, պրոֆ. Մեհմեդ Գյորմեզը մասնակցել է նորակառույց մզկիթի բացմանը: Արարողությանը ներկա են եղել նահանգապետը, քաղաքի մուֆթին եւ պաշտոնատար այլ անձինք: Բացման արարողությունից հետո Գյորմեզը դիմել է բազմությանը: Ինչպես օգոստոսի 27-ին նշել էր «Հաբերթուրք» կայքէջը, ելույթում նա կարեւորել է մզկիթների ճարտարապետության նշանակությունը, քննադատել է ճարտարապետներին, որ նրանք անցած 80 տարիների ընթացքում հանրապետական շրջանին յուրահատուկ մզկիթ չեն ստեղծել, որովհետեւ խռովել էին:**

**Այնուհետեւ նա շարունակել է. «Մի՞թե ոչ մահմեդականը չի կարող մզկիթ կառուցել: Քարը քարի վրա դնելով կկառուցի: Օրինակ՝ Թանզիմաթի շրջանում Ստամբուլի բազմաթիվ մզկիթների ճարտարապետը մեր հայ քաղաքացիներն են եղել: Ոչ մահմեդականը մզկիթ կկառուցի, բայց կերտել չի կարող: Քանզի մզկիթները մեզ համար ե՛ւ աղոթատեղի են, ե՛ւ միաձուլման վայր, որտեղ մեր սրտերն են մերձենում: Այլ կրոնների աղոթատեղիները մեհյան են, մերը՝ ոչ: Մենք երկրպագում ենք ոչ թե մեհյանին, այլ՝ Արարիչին: Սա է մյուսներից մեր տարբերությունը»:**

**Խոսքն, իհարկե, քրիստոնյաների մասին է: Թուրքիայի կրոնական գործերի գերատեսչության պետ Գյորմեզը չի կարող չիմանալ, որ Արարչին են երկրպագում եկեղեցիներում, քանի որ քրիստոնեությունը հեթանոսություն չէ: Ի վերջո ինքը աստվածաբանության պրոֆեսոր է: Այդ դեպքում ինչո՞վ պայմանավորել այս աստվածաբանի՝ եկեղեցին մեհյանի հետ «շփոթելու» արարքը: Ըստ երեւույթին, այլադավանների նկատմամբ թուրքական ավանդական լայնախոհ հանդուրժողականության առանձնահատկություններով, ինչպես նաեւ Թուրքիայի քրիստոնյա քաղաքացիներին ոչ թե ուղղակի, այլ անուղղակիորեն վիրավորելու Գյորմեզի ճարպկությամբ:**

**Հ. Չ.**

# Համաթուրքական այբուբե՞ն են ստեղծելու

**Բաքվում լրջորեն քննարկվում է գործող այբուբենը նորացնելու գաղափարը: Այդ առթիվ կարծիք է հայտնել խորհրդարանի մշակույթի հարցերով կոմիտեի նախագահ Նիզամի Ջաֆարովը: «Ականավոր լեզվաբան Ֆահրեդդին Վեյսելլիի առաջարկությունը՝ այբուբենը որոշակի փոփոխությունների ենթարկելու մասին, կարող է քննարկվել, եւ հարկ է դրան լուրջ վերաբերվել»,- ասել է նա:**

**Խորհրդարանականի կարծիքով, ադրբեջաներենի այբուբենը «համակարգչային ծրագրավորմանը դժվար է ադապտացվում, որոշ գրանշանների փոփոխության անհրաժեշտություն կա»: Այդուհանդերձ, Ջաֆարովը կարծում է, որ այդ հարցում «չի կարելի մեկուսի որոշում ընդունել, անհրաժեշտ է հաշվի առնել թուրքախոս բոլոր ժողովուրդների մոտեցումները»:**

**Ներկայումս թուրքախոս երկրներից Թուրքիան եւ Ադրբեջանը օգտագործում են լատինատառ, Ուզբեկստանը, Ղազախստանը եւ Ղրղզստանը՝ ռուսատառ այբուբեն: Նախկինում օգտագործվել է արաբատառ այբուբեն: Բիշքեկում թուրքախոս երկրների գագաթաժողովից հետո մամուլում տեղեկատվություն էր տարածվել, որ քննարկվել են կազմակերպության «միասնական դրոշ» եւ թուրքախոս ժողովուրդների համար «համընդհանուր նշանակության այբուբեն ստեղծելու» հարցեր:**

**Ինչպես վկայում է Ադրբեջանի Միլլի մեջլիսի կոմիտեի նախագահի՝ այբուբենում փոփոխություններ կատարելիս թուրքախոս բոլոր ժողովուրդների մոտեցումները հաշվի առնելու մասին ասածը, խոսքն ամենայն հավանականությամբ վերաբերում է «ժամանակակից տեղեկատվական միջավայրին ադապտացված համաթուրքական այբուբեն» ստեղծելու գաղափարին, որը կարող է քննարկվել խորհրդարանական մակարդակներում:**

**Վ. Ա.**

# Սիրիայի նկատմամբ լարվածությունը սրելու Էրդողանի քաղաքականությունը հակազդեցություն է առաջ բերում Թուրքիայում

*1-ին էջից*

Խոսքն առաջին հերթին Հաթայի «Ափայդն» ճամբարի մասին է, որը սիրիական այսպես կոչված ընդդիմության առաջապահ զորախմբի համար հենակետ է դարձել, իսկ Սիրիայի սահմանամերձ շրջանները վերածվել են մոջահեդների ռազմաբազայի:

Հատկանշական է, որ փախստականներին հատկացված սովորական ճամբարներում պայմաններից, հետեւաբար թուրքական իշխանություններից, բողոքում են խաղաղ սիրիացիները, եւ բողոքը զուգորդվում է անկարգություններով: Հակառակ դրան, «Ազատ Սիրիայի բանակի» ու «Ափայդն» ճամբարի գրոհայիններից էլ բողոքում է սահմանամերձ նահանգների տեղացի բնակչությունը: Այս նահանգների մեջ բողոքի առումով առանձնակի տեղ ունի Հաթայը Անթաքիա կենտրոնով եւ այնպիսի շրջաններով, ինչպիսիք են Ռեյհանլին ու Յայլադաղին:

Բնակչության բողոքը թուրքական մամուլում լայն արձագանք գտավ օգոստոսի 26-ին, երբ Թուրքիայի ազգային մեծ ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ, Հաթայի պատգամավոր Մեհմեդ Ալի Էդիբօղլուի գլխավորած Ժողովրդա-հանրապետական կուսակցության պատվիրակությանն արգելվեց մուտք գործել «Ափայդն» ճամբար: Մինչդեռ Հաթայը «գործունեության շրջան» է հայտարարված Կենտրոնական հետախուզական վարչության համար, այնտեղ, օտարերկրյա մամուլի վկայությամբ, վխտում են գերմանական, ֆրանսիական, անգլիական եւ իսրայելական հետախուզության գործակալները, սիրիական «ընդդիմությանն» աջակցելու գլխավոր առաջադրանքով, որպեսզի արագացնեն Ասադի վարչակարգի տապալումը:

Միեւնույն առաջադրանքով առաջնորդվելու պատճառով Թուրքիան էլ աջակցում է ինչպես սիրիական «ընդդիմությանը» զենք մատակարարող այս գործակալներին, այնպես էլ «Ափայդն» ճամբարից զատ Անթաքիայում, Քիլիսում վարձակալած բնակարաններում ապրող գրոհայիններին: Մինչ օտարերկրյա գործակալների ճամբարում մարզում են գրոհայիններին ու նրանց հետ ներթափանցում Սիրիա՝ մասնակցելու կռիվներին, գրոհայիններն էլ զինված շրջում են քաղաքում եւ ահաբեկում բնակչությանը:

Թուրքական լրատվամիջոցների եւ օտարերկրյա մամուլի, մասնավորապես՝ «Լոս Անջելես թայմսի» վկայությամբ, Հաթայի ողջ նահանգը վերածվել է զենքի շուկայի, իսկ Անթաքիայի պետական հիվանդանոցները՝ բուժկենտրոնի սիրիական «ընդդիմության» գրոհայինների համար, տեղացիներին չեն սպասարկում: Ավելին, գրոհայինները իմանալով, որ բժիշկը ալավի է, հրաժարվում են նրա ծառայությունից: «Ջումհուրիեթի» վկայությամբ, նրանք քաղաքում սպառնում են ալավի առեւտրականներին, թե հերթը ձեզ է հասնելու, նույն ճակատագրին եք արժանանալու, ինչ Սիրիայի ալավիները: Հաշվի առնելով այն, որ գրոհայինները տրանսպորտում հրաժարվում են ուղեվարձը վճարել, իսկ ճաշարաններում՝ հաշիվը, բախումները բնակչության հետ անխուսափելի են դառնում:

Ի դեպ, գրոհայինների ագրեսիվ կեցվածքի մասին «Միլլիեթին» պատմել է Ժողովրդա-հանրապետական կուսակցության պատգամավոր Սուլեյման Չելեբին: Նրա խոսքերով, «Ափայդն» ճամբարի մուտքի մոտ որոշ փախստական երիտասարդներ, նկատի ունենալով իրենց պատվիրակության անդամներին, իրար արաբերեն ասել են. «Սրանց բոլորին կտոր-կտոր պետք է անել»:

Այլ կերպ, որքան էլ Էրդողանի կառավարությունը աջակցի Սիրիայի «ընդդիմությանը», Հաթայի գլխավորությամբ սահմանամերձ նահանգների բնակչությունը դժգոհ է ոչ միայն սանձարձակ գրոհայիններից, այլեւ Թուրքիա ապաստանած սիրիացի բոլոր փախստականներից: Դա ունի մի քանի պատճառներ, որոնցից գլխավորը այդ բնակչության արաբական ծագումն է եւ հարազատները, որոնք բնակվում են սահմանի սիրիական հատվածում:

Քանի որ «ընդդիմությունը» պայքարում է նախագահ Ասադի վարչակարգի դեմ, իսկ «Ազատ Սիրիայի բանակի» խայտաբղետ էթնիկ կազմ ունեցող գրոհայինները Սիրիայում ավերում եւ ոչնչացնում են բնակավայրերը, ուստի Թուրքիայի արաբները ընդդիմությանը նայում են թշնամու, իսկ գրոհայիններին՝ մարդասպանի աչքերով: Եթե այս ամենին ավելացնենք, որ նրանք դավանանքով նաեւ ալավի են, կարծում ենք, ավելի ըմբռնելի կդառնա նրանց վերաբերմունքը:

Խնդիրը, սակայն, Թուրքիայի սահմանամերձ նահանգների արաբները կամ ալավիները չեն, այլ ողջ բնակչությունը: Վարչապետ Էրդողանի սիրիական քաղաքականությունը, որի հիմքում լարվածության հետեւողական սրումն է, անկախ «Ազատ Սիրիայի բանակի» սանձարձակություններից, խիստ անհանգստացնում է սահմանամերձ նահանգների բնակչությանը, որովհետեւ պատերազմի սպառնալիք է պարունակում: Այս քաղաքականությունը Արեւմուտքի դավադրությամբ պայմանավորվող Թուրքիայի բնակչությունն էլ, լինելով 99 տոկոսով մահմեդական, հավանություն չի տալիս կրոնակից երկրի նկատմամբ իրականացվող թշնամական ձեռնարկումներին, այն էլ հանուն քրիստոնյա պետությունների: Էլ չենք խոսում Սիրիայի հետ սահմանային առեւտրի լճացման մասին, որից առավելապես տուժում են սահմանամերձ նահանգները՝ Հաթայի, Ուրֆան, Գազիանթեպը:

ԱԶԳ

## Մշակույթ

# Հակոբ Պարոնյանի անվան թատրոնը կբացի իր 70-րդ թատերաշրջանը

Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնը սեպտեմբերի 12-ին իր դռները կբացի թատրասերների առջեւ՝ ազդարարելով 70-րդ թատերաշրջանի բացումը Ժիրայր Անանյանի «Տե՛ր, մի՛ թողնի մեզ անտեր» կատակերգությամբ: Երեկ թատրոնի կազմը սկսեց իր աշխատանքները, ամառային հանգստից հետո: Թատրոնի գեղարվեստական ղեկավար, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր **Երվանդ Ղազանչյանը** ներկայացրեց թատերաշրջանի ծրագրերն ու առաջիկա հյուրախաղերը: Հոբելյանական տարում թատրոնը իր խաղացանկում ընդգրկել է 22 ընթացիկ բեմադրություններ եւ 3-4 պրեմիերաներ: Սեպտեմբերի կեսին թատերասերների դատին կներկայացվի Ալ. Շիրվանզադեի «Մորգանի խնամին», ավելի ուշ Տիգրան Ջուխաճյանի «Կարինե» օպերետի, Նուշիչի «Տիկին մինիստրուհին» կատակերգությունների առաջնախաղերը: Քննարկման փուլում են Նորայր Ադալյանի եւ Սամվել Խալաթյանի պիեսները, որից հետո կորոշվի, թե ով է բեմադրելու դրանք, ասաց պրն Ղազանչյանը «**Ազգի**» հետ զրույցում:

Իսկ նոյեմբերին կսկսվի տոնածառային ներկայացումների փորձերը: Նոյեմբերի սկզբին պարոնյանցիները իրենց հարկի տակ կընդունեն Վանաձորի Աբելյանի անվան պետական թատրոնին: Հյուրախաղերից հետո թատրոնի գեղարվեստական ղեկավար, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Վահե Շահվերդյանը Պարոնյանի թատրոնում կբեմադրի Նուշիչի «Տիկին մինիստրուհին» 2 գործողությամբ կոմեդիան: Այնուհետեւ թատրոնը հյուրախաղերի կմեկնի Մերձբալթյան երկրներ, իսկ հոկտեմբերի 1-ին կմասնակցի Ալավերդի քաղաքի ավանդական թատերական փառատոնին, որից հետո կմեկնի Սպիտակ քաղաք ու կներկայացնի «Զգուշացե՛ք, կանա՛յք» 2 գործողությամբ կոմեդիան: Պարոնյանցիները Սպիտակ դատարկաձեռն չեն գնա եւ արդեն իսկ սկսել են գրքերի հավաք, որոնք կնվիրաբերվեն Սպիտակի գրադարանին:

70 տարվա բարդ ու դժվարին ճանապարհ է անցել այժմյան երաժշտական կոմեդիայի թատրոնը: Իսկ նրա սկիզբը, որքան էլ որ զարմանալի է, հիմնադրվեց 1942 թ., երբ դեռ պատերազմի ավարտը հայտնի չէր: Հայաստանի կառավարությունը ընդունեց որոշում հիմնել «Ծիծաղի թատրոն»: Եվ հենց այդ տարի հունիսի 22-ին Երեւանում բացվեց որպես առաջին օպերետային թատրոնը Ռուդոլֆ Նելսոնի «Թագավորը զվարճանում է» բեմադրությամբ, որի բեմադրիչն է Թաթիկ Սարյանը, դիրիժորը Ռախսա Սարկիսովան: Այդ տարիներին թատրոնի շուրջը համախմբվեցին հայտնի մտավորականներ՝ Շառա Տալյան, Արտեմի Այվազյան, քիչ ավելի ուշ Կարպ Խաչվանքյան եւ էլի շատ ուրիշներ: Թատրոնի ոսկե դարը կապված է անվանի ռեժիսոր Վարդան Աճեմյանի հետ, որտեղ նա երկար տարիներ բազմաթիվ պիեսներ է բեմադրել: Սկզբնական շրջանում թատրոնը տեղակայվել էր ռուսական թատրոնի շենքում, իսկ 1949-ից նրանց տրամադրվեց Հայաստանի առաջին պառլամենտի շենքը (ներկայիս թատրոնի շենքի տեղում) եւ մինչեւ 1974 թվականը՝ շենքի փլվելը, թատրոնը գործեց այդ հնամենի փոքր, նեղ բեմով շենքում:

Իսկ հետո եկան թատրոնի տառապալից 18 տարիները, երբ թատրոնն առանց տանիքի՝ «Թատրոն անիվների վրա», այսպես էին անվանում պարոնյանցիներին, երբ 1974 թ. Հ. Պարոնյանի ծննդյան 120-ամյակի առիթով առաջին օպերետային թատրոնը անվանվեց հայ մեծանուն գրողի անվամբ: Այդ 18 տարիներին թատրոնը թափառեց հանրապետության տարածքով մեկ, մինչեւ նույն տեղում կառուցվեց թատրոնի նոր շենքը: 1992 թվականի սեպտեմբերին, վերջապես թատրոնը հիմնավորվեց նոր շենքում եւ թատերաշրջանը բացեց Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» կոմեդիայով:

Թատրոնի հիմնասյուներ դարձած դերասաններից, ցավոք, այսօր միայն Սվետլանա Գրիգորյանի խաղը թատրասերները հնարավորություն ունեն վայելելու՝ միջին եւ երիտասարդ սերնդի ներկայացուցիչների հետ միասին: Սակայն երբեք չեն մոռացվում բոլոր այն երախտավորները, որոնց ջանքերով հիմք դրվեց ու տարեցտարի կոմեդիայի թատրոնը ծաղկում ապրեց: Հիշենք նրանցից մի քանիսին՝ Մելինե Համամջյան, Ստեփան Հարությունյան, Ալեքսանդր Հովհաննիսյան, Մայիս Կարագյոզյան, Կիմ Երիցյան, Կարպ Խաչվանքյան... Այսօր թատրոնը գործում է 40 դերասաններով՝ միջին եւ երիտասարդ սերնդի ներկայացուցիչներով, նվագախմբի 30 երաժիշտների (գլխավոր դիրիժոր՝ Յուրի Դավթյան, Հարություն Արզումանյան), երգչախմբի ջանքերով, որոնց ղեկավարում ու թատերարվեստի զարգացման խնդիրներով մտահոգ է պրոֆեսոր Երվանդ Ղազանչյանը՝ մշտապես երիտասարդ կադրերով թատրոնը համալրելով եւ հայ դրամատուրգիային զարկ տալով:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Մեծանուն երաժիշտներ Հայաստանում՝ սեպտեմբերի 10-ից հոկտեմբերի 20-ը

Սեպտեմբերի 10-ից հոկտեմբերի 20-ը մեկնարկում է Երեւանյան 6-րդ միջազգային երաժշտական փառատոնը, որն իրականացվում է ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ:

Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի 2012-2013 թթ. համերգաշրջանը կմեկնարկի սեպտեմբերի 10-ին՝ Երեւանյան 6-րդ միջազգային երաժշտական փառատոնով: Արդեն ավանդույթ դարձած ամենամյա փառատոնը կտեւի մինչեւ հոկտեմբերի 20-ը եւ կներառի տասնմեկ սիմֆոնիկ եւ կամերային երաժշտության համերգներ: Ինչպես եւ նախորդ տարիներին, այս անգամ եւս փառատոնի շրջանակներում Երեւանում կհյուրընկալվեն միջազգային մեծագույն վաստակ ունեցող երաժիշտներ՝ Սերգեյ Նակարյակովը (շեփոր, Իսրայել), Բորիս Բրովցինը (ջութակ, Մեծ Բրիտանիա), Պոլինա Լեշչենկոն (դաշնամուր, Բելգիա), Դայշին Կաշիմոտոն (ջութակ, Ճապոնիա), Էշլի Վոսը (դաշնամուր, Մեծ Բրիտանիա), Ալեքսանդր Չաուշյանը (թավջութակ, Մեծ Բրիտանիա), Վահան Մարտիրոսյանը (դաշնակահար-դիրիժոր, Ֆրանսիա) եւ այլք: Փառատոնի ծրագրերին որպես մենակատարներ հանդես կգան նաեւ հայազգի երիտասարդ տաղանդաշատ երաժիշտներ, ինչպես նաեւ Հայաստանի ֆիլհարմոնիկի լավագույն երաժիշտները:

Փառատոնին մասնակցելու է հռչակավոր Բորոդինի անվան լարային քառյակը, որը հանդես կգա ինչպես կամերային երաժշտության համերգով, այնպես էլ ֆիլհարմոնիկի հետ սիմֆոնիկ երաժշտության համերգով (դիրիժոր՝ Էդ. Թոփչյան): Փառատոնի ծրագրի շրջանակներում տեղի կունենա նաեւ համերգ՝ նվիրված Գերմանիայի եւ Հայաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-ամյակին: Համերգը տեղի կունենա սեպտեմբերի 29-ին: Որպես մենակատար հանդես կգա գերմանացի անվանի դաշնակահար Անդրեաս Ֆրյոլիխը: Համերգը կղեկավարի Էդուարդ Թոփչյանը: Փառատոնը կամփոփվի հոկտեմբերի 20-ին՝ աշխարհահռչակ Միշել Լեգրանի 80-ամյա հոբելյանին նվիրված տոնական համերգով, որին Հայաստանի ֆիլհարմոնիկի հետ հանդես կգա ինքը՝ լեգենդար կոմպոզիտորը: Համերգը, որին հանդես կգա նաեւ Փարիզի օպերային թատրոնի տավղահար մենակատարուհի Քեթրին Միշելը, իրականացվում է Լոնդոնի City Lights Entertainment-ի հետ համատեղ: Կարեւոր է նշել, որ սեպտեմբերի 10-ին՝ փառատոնի մեկնարկային համերգի ծրագրում կհնչեն Ալեքսանդր Հարությունյանի ստեղծագործությունները՝ ի հիշատակ հայ մեծանուն կոմպոզիտորի:

Երեւանյան 6-րդ միջազգային երաժշտական փառատոնի ծրագիրը՝ ինչպես միշտ՝ կներառի նաեւ հրավիրյալ մենակատարների կողմից անցկացվող վարպետության դասեր՝ հայ երիտասարդ երաժիշտների համար:

Փառատոնը կայանում է ՀՀ նախագահի տիկին Ռիտա Սարգսյանի բարձր հովանու ներքո:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## ՑԱՆԿԱՆՈ՞ՒՄ ԵՔ ՏԻՐԱՊԵՏԵԼ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԻՆ

ՀԺՄ պատանի ժուռնալիստի դպրոցը /որը գործում է 1973 թվականից/ Երեւանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի հետ համատեղ հրավիրում է սովորելու հանրակրթական դպրոցների ժուռնալիստական հակում ունեցող բարձր դասարանցիների եւ վերջին տարիների շրջանավարտների:

Դասերը վարում են հանրապետության լավագույն մասնագետները, Պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի դասախոսները:

*Ուսման տեւողությունը՝ մեկ տարի:*

Պարապմունքները կսկսվեն հոկտեմբերի 2-ից՝ յուրաքանչյուր երեքշաբթի, ժամը 15.00-ին, ժուռնալիստի տանը՝ Պուշկինի 3ա հասցեում եւ Երեւանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետում՝ յուրաքանչյուր ուրբաթ ժամը 16-ին:

**Ուսուցումն անվճար է:**

*Ավարտողները կստանան վկայագիր:*

Դիմել կարող են ամեն օր, ժամը 12.00-16.00-ն, բացի շաբաթ եւ կիրակի օրերից, մինչեւ սեպտեմբերի 30-ը:

*Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 56-12-76, 56-14-47 հեռախոսահամարներով:*

## ՇԻՐԱԿ

# Երիտասարդ նկարիչների հանրապետական ստեղծագործական հավաք Թորոս գյուղում

Շիրակի մարզի Թորոս գյուղում (գրվում է նաեւ միասին), «Մանուշակ» ճամբարի տարածքում օգոստոսի 28-ին անցկացվել է «Մինասի գույներով» խորագրով երիտասարդ նկարիչների ներկայացուցչական ստեղծագործական հավաք՝ պլեներ: Այս բառը ֆրանսերեն է, նշանակում է բացօթյա: Դա առարկաները բնական լույսի տակ ու բնական պայմաններում պատկերելու տեխնիկան է: Այս բառեզրը գործածվում է նաեւ բնական պայմաններում բնության գեղեցկության ու հարստության, գույնի բոլոր փոփոխությունների ճշմարիտ արտացոլումը լույսի եւ օդի ակտիվ դերակատարման դեմքում ցույց տալու համար (www.ARMhistory.ru):

Միջոցառումը 40 մասնակիցներ էր հավաքել հանրապետության մարզերից, մայրաքաղաքից, ինչպես նաեւ պատվիրակություն ՌԴ Ուլյանովսկի մարզից: Ներկա են եղել ՀՀԿ փոխնախագահ Գալուստ Սահակյանը, հանրապետության մշակույթի նախարարի տեղակալ Արթուր Պողոսյանը, Հայաստանի նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանը, ուրիշներ: Հանդիսավոր բացումից հետո ներկաները ծանոթացել են մասնակիցների բացօթյա ցուցադրված գեղանկարչական աշխատանքներին, այնուհետեւ երիտասարդ նկարիչներն անցել են գեղեցիկ բնության գրկում ստեղծագործական աշխատանքի:

Հավաքը տեւելու է չորս օր, որի ընթացքում մասնակիցները նաեւ կայցելեն Ջաջուռ՝ Մինաս Ավետիսյանի թանգարան, որտեղ նաեւ ստեղծագործական բաց դաս կկազմակերպվի, կլինեն Մարմաշենի միջնադարյան վանական համալիրում, Գյումրու թանգարաններում, Մարիամ եւ Երանուհի Ասլամազյանների պատկերասրահում, Գեղագիտության ազգային կենտրոնի տեղի մասնաճյուղում: Մտադրություն կա այսպիսի հավաքները դարձնել շարունակական:

Գ. Մ.

# «Թուրքիան աշխարհին զուռնա-դհոլով տեղեկացնում է, թե վերականգնում է Աղթամարը, մինչդեռ քանդում է Մրենի տաճարը»




Հայկական ճարտարապետությունը ուսումնասիրող հիմնադրամի 2012 թ. հրատարակչական գործունեության, մտահոգությունների եւ ապագա ծրագրերի մասին երեկ զրուցեց **Սամվել Կարապետյանը**:

Հուշարձանագետն ասաց, որ լույս է տեսել հիմնադրամի գրքաշարի 15-րդ հատորը՝ նվիրված հիմնադրամի հիմնադիր-նախագահ Արմեն Հախնազարյանի ուսումնասիրություններին. «Հիմնադրամը հրատարակել էր նաեւ «Անի» եռալեզու հատորյակը՝ նվիրված Անին մայրաքաղաք հռչակելու 1050-ամյակին, որը պարունակում է շուրջ 700 լուսանկար, մանրամասն տեղեկություններ յուրաքանչյուր շինության վերաբերյալ, ինչպես նաեւ ներառում է Անիի հատակագիծը:

Հատկանշական է, որ հայկական գրատպության 500-ամյակի առթիվ հրատարակվել էր նաեւ հայկական տպարանների քարտեզ: Բանախոսը նշեց նաեւ, որ արդեն 3-րդ տարին է, ինչ հիմնադրամը լույս է ընծայում «Վարձք» հանդեսը. «Փոքր ծավալի ուսումնասիրությունները նպատակահարմար չէ գիրք դարձնել, իսկ առկա ակադեմիական հանդեսները տարբեր պատճառներով բավարար չեն: Այս տարի լույս է տեսել «Վարձքի» 3 համար»:

Հուշարձանագետը տեղեկացրեց, որ հանդեսի վերջին համարը ներառում է երկու առանցքային նյութ՝ խորհրդային տարիներին արված լուսանկարի համաձայն՝ Ագուլիսում պահպանվել էին 7 եկեղեցի, 1 վանք եւ 8 պաշտամունքային վայր, մինչդեռ տիեզերքից արված նոր լուսանկարները փաստում են, որ Ագուլիսը մշակութաթափ է արված, ինչպես Նախիջեւանի բոլոր հնավայրերը, իսկ մյուսը վերաբերում է Հայաստան-Թուրքիա սահմանին գտնվող Մրենի տաճարին. «Ներսում հսկայական փոս է փորված, իսկ սրբատաշ քարերը հանված են: Տաճար մտնել չի կարելի՝ հսկողություն է սահմանված, սակայն հսկողները աչք են փակում գանձախույզների եւ տաճարն ավերողների վրա, մինչդեռ զբոսաշրջիկներին չեն թույլատրում անգամ մոտենալ»: Հավելեց, որ Թուրքիան աշխարհին զուռնա-դհոլով տեղեկացնում է, թե վերականգնում է Աղթամարը, մինչդեռ քանդում է Մրենի տաճարը: Այդ քայլը Թուրքիայի պետական քաղաքականության մի մասն է:

Բանախոսը հավելեց, որ Վրաստանում եւս շատ բան է ոչնչացվել, սակայն վստահեցրեց, որ Վրաստանի իշխանություններն իրենց խոստումը կատարում են՝ պատշաճ ձեւով իրականացվում է Ս. Նշան եկեղեցու վերականգնման աշխատանքները:

Անդրադառնալով ապագա ծրագրերին՝ բանախոսն ասաց, որ ծավալուն աշխատանք է տարվում Արեւմտյան Հայաստանի 70 գավառների պատմամշակութային ժառանգությունը 50 գրքից բաղկացած հատորյակում ամփոփելու ուղղությամբ, որոնցից առաջինը կհրատարակվի 2015-ին:

Ս. Հ.

# Մարզական

## Ժորժ Եղիկյանն ուժեղագույնն է Եվրոպայում

Բուխարեստում ընթացող ծանրամարտի Եվրոպայի մինչեւ 17 տարեկանների պատանեկան առաջնությունում հաջող են հանդես գալիս հայ ծանրորդները: Մրցումների հերթական օրը մրցահարթակ դուրս եկած Հայաստանի 3-րդ ներկայացուցիչն էլ փայլուն ելույթ ունեցավ՝ նվաճելով Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: Խոսքը 62 կգ քաշային Ժորժ Եղիկյանի մասին է, որը երկամարտում ցույց տվեց 251 կգ (113+138) արդյունք:



Պոկում վարժությունում հայ ծանրորդը հաջորդաբար բարձրացրեց 105, 110 եւ 113 կգ ծանրությունները ու արժանացավ արծաթե մեդալի: Այստեղ լավագույնը վրացի Իրակլի Գաբրիչիձեն էր, որը Ժորժին գերազանցեց 4 կգ-ով: 113 կգ էր բարձրացրել նաեւ բուլղարացի Բոժիդար Անդրեեւը, սակայն անձնական ավելի ծանր քաշի պատճառով հայ ծանրորդին զիջեց արծաթե մեդալը՝ գրավելով 3-րդ տեղը:

Չեմպիոնի կոչման համար մղվող պայքարում վճռորոշ եղան հրում վարժության արդյունքները: Այստեղ հայ ծանրորդը լավագույնն էր: Նա սկզբում բարձրացրեց 134 կգ, հետո ծանրաձողի քաշն ավելացնելով 4 կգ-ով, իրեն ենթարկեց նաեւ այդ ծանրությունը: 3-րդ մոտեցման համար Եղիկյանը պատվիրեց 145 կգ, բայց այս անգամ նրա ուժերից վեր էր ծանրաձողը բարձրացնելը: Սակայն 138 կգ-ն էլ բավարար էր հրում վարժությունում ոսկե մեդալ նվաճելու եւ Եվրոպայի չեմպիոն դառնալու համար:

2-րդ տեղը գրավեց վրացի Իրակլի Գաբրիչիձեն, որը երկամարտում ցույց տվեց 249 կգ (117+132) արդյունք՝ 2 կգ-ով զիջելով Եղիկյանին: Բրոնզե մեդալակիր դարձավ բուլղարացի Բոժիդար Անդրեեւը:

Մինչեւ 58 կգ աղջիկների պայքարում Հայաստանը ներկայացված չէր: Հաջողությունն ուղեկցեց ռուսաստանցի Ալինա Ֆիտովային, որը ոսկե մեդալի արժանացավ երկամարտի 176 կգ (75+101) արդյունքով: Հետաքրքրական է, որ նույնպիսի արդյունք ցույց տվեցին նաեւ ուկրաինուհի Ելենա Կոխանենկոն ու թուրք Մեհթապ Կուրնազը, որոնք անձնական քաշով ավելի ծանր էին ու բավարարվեցին արծաթե եւ բրոնզե մեդալներով:

Մինչեւ 63 կգ քաշային աղջիկների մրցավեճում էլ Հայաստանը ներկայացուցիչ չուներ: Բայց հայ մարզուհին կանգնեց պատվո պատվանդանին: Ռուսաստանը ներկայացնող Անի Սարգսյանը երկամարտի 188 կգ (80+108) արդյունքով գրավեց 2-րդ տեղը՝ առանձին վարժություններում էլ արծաթե մեդալների արժանանալով: Չեմպիոնուհու տիտղոսը նվաճեց ռումինուհի Ելենա Տոման, որը երկամարտում ցույց տվեց 199 կգ (91+108) արդյունք:

## Կինոլոգները ԴՕՍԱԱՖ-ի հետ համատեղ բանակի համար մասնագետներ կպատրաստեն

Խորհրդային տարիներին Երեւանում գործում էին ժամանակակից հնգամարտի եւ ծառայողական շների վարժեցման դպրոցները, մի շարք հրաձգարանները: Այսօր այդ ամենից գրեթե ոչինչ չի մնացել: Դրանք վերականգնելու հարցով մտահոգ 2 կազմակերպությունների ղեկավարները՝ ԴՕՍԱԱՖ-ի նախագահ, Արցախի հերոս, գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադեւոսյանն ու Հայաստանի կինոլոգիական, կինոլոգիա-սպորտային միության նախագահ Վիոլետա Գաբրիելյանը երեկ «Տեսակետ» ակումբում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ համագործակցության պայմանագիր ստորագրեցին:



ՖՈՏՈԼՈՒՐ

**Վիոլետա Գաբրիելյանը** նշեց, որ նպատակադրվել են վերականգնել նախկինում գործող մարզական ակումբները, բացել հնգամարտի խմբակներ, ինչպես նաեւ լրջորեն զբաղվել ծառայողական շների բուծմամբ ու վարժեցմամբ, ինչը շատ կարեւոր է մեր բանակի համար: Այդ նպատակով ԴՕՍԱԱՖ-ը Նուբարաշենում գտնվող իր տարածքներն անհատույց տրամադրել է կինոլոգիա-սպորտային միությանը եւ համատեղ ուժերով պետք է կառուցվեն անհրաժեշտ շինությունները: Ճիշտ է, բանախոսները դեռ չգիտեն, թե որտեղից հայթայթեն անհրաժեշտ գումարները: Բայց նրանք լավատես են, գտնելով, որ երբ հանրությունը տեղեկանա իրենց կարեւոր նախաձեռնության մասին, ոչ միայն անհատ ձեռներեցները, այլեւ պետական մարմինները ցանկություն կունենան աջակցելու իրենց: Հուսանք, որ այդպես էլ կլինի ու մի գեղեցիկ օր իրականություն կդառնա իրենց կարեւոր նախաձեռնությունը:

**Արկադի Տեր-Թադեւոսյանը** տեղեկացրեց, որ ԴՕՍԱԱՖ-ն այսօր էլ ունի անհրաժեշտ զենք-զինամթերք երիտասարդներին կրակել սովորեցնելու եւ բանակի համար պիտանի զինվորներ պատրաստելու համար: Նա շատ կարեւորեց նաեւ ծառայողական շների վարժեցման հարցը: Որքան էլ որ այսօր ռազմական տեխնիկան կատարելագործվել է, սակայն ծառայողական շներն անփոխարինելի են հայրենիքի սահմանների պաշտպանության գործում:

Այս հարցի առնչությամբ Վիոլետա Գաբրիելյանն ավելացրեց, որ ժամանակին «Հաղթանակ» զբոսայգում ծառայողական շների վարժեցման հասուկ դպրոց էր գործում, որը հետագայում քանդվեց: Նա նշեց, որ այսօր գործում է շների վարժեցման ակումբը, որում համապատասխան մասնագետներ են աշխատում, համագործակցում են Վրաստանի մասնագետների հետ: Սեպտեմբերի սկզբին էլ Վիոլետա Գաբրիելյանը մեկնելու է Մոսկվա՝ հանդիպելու Ռուսաստանի արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացուցիչների հետ, որոնցից եւս աջակցություն է ակնկալում:

Ըստ Վիոլետա Գաբրիելյանի, աշխարհում մեծ համբավ ունի հայկական գամփռը: Այս օրերին Խաբարովսկից հայ համայնքի ներկայացուցիչներ են գտնվում Երեւանում, որոնք իրենց հետ կտանեն այդ ցեղատեսակի մեկ զույգի՝ իրենց մոտ շնաբուծությունը զարգացնելու նպատակով: Մինչ այդ էլ Կիպրոսից էին նման հարցով Երեւան ժամանել հայ համայնքի ներկայացուցիչները:

Ասուլիսի ավարտին Արկադի Տեր-Թադեւոսյանն ու Վիոլետա Գաբրիելյանը մեկ անգամ եւս նշեցին իրենց նախաձեռնության կարեւորությունը եւ հույս հայտնեցին, որ լրատվամիջոցներն էլ իրենց հրապարակումներով կօգնեն ծրագրվածը կյանքի կոչել:

ՇԱԽՄԱՏ

## Լեւոն Արոնյանը հաղթանակ պարգեւեց իր թիմին

**Շախմատի օլիմպիադայի 3-րդ տուրում Հայաստանի տղամարդկանց հավաքականը 2,5-1,5 հաշվով հաղթեց իսպանացիներին: Հաղթանակն ապահովեց Լեւոն Արոնյանը, որն առաջին խաղատախտակի վրա պարտության մատնեց Ֆրանցիսկո Վալյեխոյին: Սերգեյ Մովսիսյան-Իվան Սալգադո, Գաբրիել Սարգսյան-Միգել Իլիեսկաս, Տիգրան Պետրոսյան-Օլեգ Կոռնեեւ պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:**

**Անհաջող խաղաց մեր կանանց հավաքականը, որն առաջին պարտությունը կրեց Հնդկաստանի շախմատիստուհիների հետ մրցավեճում՝ 1,5-2,5: Այս մրցախաղում վճռորոշ եղավ Լիլիթ Գալոյանի պարտությունը Տանիա Սաչդեւից: Ի դեպ, Լիլիթը մեկնարկային տուրում էլ պարտվել էր ու հաջորդ տուրում չէր ընդգրկվել թիմի կազմում: Մեր մյուս շախմատիստուհիներից ոչ մեկին չհաջողվեց շտկել իրավիճակը՝ հաշտություն կնքելով մրցակցուհիների հետ: Ոչ-ոքի ավարտվեցին Դանիելյան-Դռոնավալի, Կարավադե-Մկրտչյան, Գոմես-Կուրունվա պարտիաները:**

**3 տուրից հետո 11-ական միավորով տղամարդկանց մրցաշարի առաջատարներն են ԱՄՆ-ի եւ Ադրբեջանի հավաքականները: Հայաստանն ունի 9,5 միավոր: Առաջատարների մասնակցությամբ հանդիպումների արդյունքներն են. Վենեսուելա-ԱՄՆ՝ 0,5-3,5, Ֆարերներ-Ադրբեջան՝ 0,5-3,5, Ուկրաինա-Իսրայել՝ 2,5-1,5, Ռուսաստան-Լատվիա՝ 2,5-1,5, Ռումինիա-Չինաստան՝ 1-3:**

**Կանանց մրցաշարի առաջատարը սերբերն են, որոնք վաստակել են 11,5 միավոր: Սերբերը 3,5-0,5 հաշվով հաղթեցին իսպանուհիներին: 11-ական միավոր ունեն լեհերն ու ֆրանսուհիները: Լեհերը 3-1 հաշվով հաղթեցին հունգարուհիներին, ֆրանսուհիներն էլ պարտության մատնեցին ավստրուհիներին՝ 3-1: Հայաստանի հավաքականն ունի 7,5 միավոր:**

## Անդրեաս Ինիեստան Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստ

**Իսպանական «Բարսելոնի» կիսապաշտպան Անդրեաս Ինիեստան ճանաչվել է 2011/12-ի մրցաշրջանի Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստ: Երեկ Մոնակոյում տեղի ունեցած արարողության ժամանակ նրան է հանձնվել մրցանակը: Ինիեստան լավագույնի կոչման համար պայքարում գերազանցեց իր թիմակից Լեոնել Մեսիին եւ Մադրիդի «Ռեալի» կիսապաշտպան Քրիշտիանու Ռոնալդուին:**

## Մեկնարկեց շախմատի պատանեկան օլիմպիադան

**Ստամբուլում իրենց մրցավեճն են սկսել մինչեւ 16 տարեկանների շախմատային օլիմպիադայի մասնակիցները: Հայաստանի պատանի շախմատիստներն առաջին տուրում 4-0 հաշվով հաղթեցին Ավստրալիայի 2-րդ թիմին: Տիգրան Հարությունյանը հաղթեց Արի Դալեին, Մանուել Պետրոսյանը պարտության մատնեց Սավիթրի Նարենթրաին, Նորայր Թորոսյանն առավելության հասավ Լետիշա Սիմոնդսի նկատմամբ, իսկ Վլադիմիր Կանջարյանը շահեց Միրակլա Միտրանի հետ մրցավեճը:**

**2-րդ տուրում մեր հավաքականն անսպասելիորեն ոչ-ոքի խաղաց Թուրքիայի «Կարմիրների» թիմի հետ: Մեր թիմից հաղթեցին Տիգրան Հարությունյանն ու Նորայր Թորոսյանը, որոնք խաղում էին համապատասխանաբար Էգե Կոկսալի եւ Սեզեն Արասի հետ: Իսկ ահա Մանուել Պետրոսյանն ու Վլադիմիր Կանջարյանը պարտվեցին Մելիհ Յուրցեւենին ու Կոկսալ Յուկսելին:**

**Երկու տուրից հետո Հայաստանի պատանեկան հավաքականը վաստակել է 3 միավոր: 4-ական միավորով առաջատարներն են Ռուսաստանի, Ավստրալիայի 1-ին, Լեհաստանի, Հնդկաստանի, Սերբիայի, Իրանի, Սլովակիայի 1-ին եւ Շոտլանդիայի հավաքականները:**

**Երրորդ տուրում մեր շախմատիստները կմրցեն ղազախների հետ:**

## Ռոբերտ Հովհաննիսյանն առաջատարների խմբում է

**Միխայիլ Բոտվիննիկի հուշամրցաշարի 5-րդ տուրում հայ շախմատիստներից հաղթեցին միայն Վահե Բաղդասարյանն ու Համազասպ Վարդանյանը՝ պարտության մատնելով համապատասխանաբար Սվետլանա Շուլակովային եւ Վալենտինա Ֆեդոսեեւային: Վահեն ունի 3,5 միավոր, Համազասպը՝ 2,5:**

**Առաջատարների խմբում գտնվող Ռոբերտ Հովհաննիսյանը ոչ-ոքի խաղաց Վալերի Պոպովի հետ ու վաստակեց 4 միավոր: Նա կես միավոր է զիջում աղյուսակը գլխավորող Ալեքսանդր Արեշչենկոյին, Ալեքսեյ Ալեքսանդրովին, Անտոն Դեմչենկոյին ու Եվգենի Ռոմանովին:**

**Տուրն անհաջող էր Զավեն Անդրեասյանի եւ Ավետիք Գրիգորյանի համար, որոնք առաջին պարտությունները կրեցին՝ զիջելով համապատասխանաբար Բորիս Խարչենկոյին ու Եգոր Պախոմովին: Մեր 2 գրոսմայստերներն ունեն 3-ական միավոր: Պարտվեց նաեւ Վլադիմիր Պողոսյանը, որն ունի 2 միավոր: Նրա մրցակիցը Շամիլ Արսլանովն էր:**

## «Սպարտակն» ու «Դինամոն» խմբային մրցաշարում են

**Մոսկվայի «Սպարտակն» ու Կիեւի «Դինամոն» չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի ուղեգիր նվաճեցին: Սպարտակցիները հյուրընկալվելիս ոչ-ոքի (1-1) խաղացին «Ֆեներբահչեի» հետ եւ ի հաշիվ սեփական հարկի տակ տարած հաղթանակի (2-1), կշարունակեն պայքարը:**

**Կիեւի «Դինամոն» դեռեւս առաջին խաղում հյուրընկալվելիս 3-1 հաշվով հաղթելով Մենխենգլադբախի «Բորուսիային», ուղեգրի նվաճման լուրջ հայտ էր ներկայացրել: Սակայն սեփական հարկի տակ թիմն անհաջող հանդես եկավ ու քիչ էր մնացել դուրս մնար հետագա պայքարից: Հյուրերին հաջողվեց 2 գոլ խփել եւ մոտ էին 3-րդին, որը նրանց ուղեգիր կպարգեւեր: Բարեբախտաբար, խաղավերջում դինամոյականներին հաջողվեց կրճատել հաշիվը: 1-2 հաշվով կրած պարտությունը «Դինամոյի» համար հաղթանակին հավասարազոր էր:**

**Խմբային մրցաշարում հանդես կգա նաեւ ֆրանսիական «Լիլը», որը սեփական հարկի տակ 2-0 հաշվով ռեւանշի հասավ առաջին խաղում «Կոպենհագենից» կրած պարտության դիմաց (0-1): Ռումինական ՉՖՌ-ն 2-րդ խաղում էլ հաղթեց «Բազելին» (1-0) ու մտավ հաջորդ փուլ: Խմբային մրցաշարում հանդես կգա նաեւ շոտլանդական «Սելթիկը», որը 2-րդ խաղում էլ միեւնույն 2-0 հաշվով հաղթեց շվեդական «Հելսինգբորգին»:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ Օրվա հետքերով

# ԱՄՆ-ում 100-ամյա վարորդը մեքենան հարվածել է աշակերտների խմբին

**Լոս Անջելեսի հարավում՝ Մեյն Սթրիթի տարրական դպրոցի մոտ 100-ամյա մի վարորդ մեքենայով հարվածել է մայթի վրա կանգնած մի խումբ երեխաների եւ ծնողների, հաղորդում է Fox News հեռուստաընկերությունը:**

**Միջադեպը տեղի է ունեցել դասերի ավարտից անմիջապես հետո: Ոստիկանության տվյալներով, դպրոցի մերձակա խանութի կայանատեղից դուրս եկած մեքենան հետընթաց շարժմամբ մխրճվել է մարդկանց խմբի մեջ: Վիրավորվել է 11 մարդ, այդ թվում՝ 9 երեխա:**

**Կալիֆոռնիայում վարորդական իրավունք ունենալու համար տարիքային սահմանափակում գոյություն չունի: Վարորդ Պրեստոն Քարտերը, որը սեպտեմբերի 5-ին կդառնա 101 տարեկան, կարծում է, որ դժբախտ պատահարի պատճառը իր «Կադիլլակի» արգելակների խափանումն է: «Արգելակները խափանվեցին, ամեն ինչ դուրս եկավ վերահսկողությունից», ասել է նա KCAL-TV հեռուստաալիքի թղթակցին:**

**Ոստիկանությունում հակված են պատահարը դիտարկելու իբրեւ ճանապարհային միջադեպ: Քարտերը համագործակցում է քննիչների հետ եւ կմնա ազատության մեջ:**

**11 տուժածները հիվանդանոցում են: Երեխաներից 4-ի վիճակը նախապես եղել է անչափ ծանր, բայց հետո կայունացել է: Այժմ նրանց վիճակը համարվում է ծանր: Բժիշկները ասում են, որ տուժածների կյանքին այլեւս վտանգ չի սպառնում:**

**Սա Կալիֆոռնիայում ծեր վարորդների մեղքով պատահած բնավ առաջին միջադեպը չէ: Այսպես, 2003-ին Սանտա Մոնիկայում 86-ամյա մի տղամարդ արգելակի եւ գազի ոտնակները շփոթելու պատճառով չէր կարողացել ժամանակին կանգնեցնել մեքենան, մտել էր բաց շուկա՝ սպանելով 10 եւ վիրավորելով 63 մարդու:**

VIVACELL MTS

Տեղեկացնում ենք, որ միջազգային զանգերի ինքնարժեքի բարձրացման կապակցությամբ, ս.թ. սեպտեմբերի 10-ից ՎիվաՍել-ՄՏՍ-ի հեռախոսահամարներից «Հեռազանգ» եւ «Իմ աշխարհը» ծառայությունների միջոցով դեպի Ռուսաստան կատարվող զանգի մեկ րոպեի արժեքը կկազմի 50 դրամ, իսկ դեպի Վրաստան կատարվող զանգի մեկ րոպեի արժեքը կկազմի 60 դրամ:

*«Ղ-Տելեկոմ» ՓԲ ընկերություն*

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է ՀՀ Երեւան քաղաքի Կիլիկիա թաղամասում Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի «Փյունիկ» ֆուտբոլային ակումբին ոռոգման նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 3,0 լ/վրկ ջրառի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2012 թ. սեպտեմբերի 6-ին ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Մուշ-2» թաղամասի թիվ 10/5 հասցեում Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիային ոռոգման նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 3,1 լ/վրկ ջրառի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2012 թ. սեպտեմբերի 6-ին ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2012 թվականի օգոստոսի 22-ի թիվ «2» որոշմամբ**
**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՊԸԱՇՁԲ-12/7**

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկը, որը գտնվում է ք.Երեւան, Արշակունյաց 7 հասցեում, կազմակերպում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել Կոմիտեի կարիքների համար Երեւան տարածքային ստորաբաժանման վարչական տարածքի ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա են հանդիսանում՝ կոմիտեի Կարիքների համար Երեւան տարածքային ստորաբաժանման վարչական տարածքի ընթացիկ նորոգման աշխատանքների կատարումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք ունեն բոլոր անձինք՝ անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Թղթային ձեւով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին՝ ք.Երեւան, Արշակունյաց 7 հասցեով, մինչեւ 2012 թվականի սեպտեմբերի 01-ը ժամը 10:30-ը: Պատվիրատուն պարտավորվում է թղթային ձեւով հրավեր ստանալու պահանջ ներկայացնելու օրվա ընթացքում թղթային հրավերը անվճար տրամադրել հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին՝ ք.Երեւան, Արշակունյաց 7 հասցեով, մինչեւ 2012 թվականի սեպտեմբերի 01-ը ժամը 10:30-ը եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով:

Մասնակիցների, մասնակցության իրավունքի եւ որակավորման չափանիշների, հրավերով սահմանված պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար, պատվիրատուին պետք է ներկայացվեն հրավերով նախատեսված փաստաթղթեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը պատվիրատուն հայտարարում է հայտարարությունը էլեկտրոնային ձեւով ուղարկելով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով՝

1) գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկել պատվիրատուի եւ (կամ) գնահատող հանձնաժողովի որոշումները՝ պայմանագիր կնքելու մասին որոշմամբ սահմանված անգործության ժամկետում,

2) դատական կարգով բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի եւ գնահատող հանձնաժողովի որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու դեպքում բողոքը ներկայացվում է Գնումների աջակցման կենտրոնե ՊՈԱԿ՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով, գրավոր: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին:

*Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր*
*անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ*
*պետական կառավարչական հիմնարկ*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2012 թվականի օգոստոսի 27-ի թիվ 1 որոշմամբ**

**Ծածկագիրը՝ ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ - 44/12**

Պատվիրատուն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել կայանի **էլեկտրական արտադրամասի փրփրահրդեհամարման համակարգի բաքերի հակակոռոզիոն շերտի նորոգման** աշխատանքների գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում **էլեկտրական արտադրամասի փրփրահրդեհամարման համակարգի բաքերի հակակոռոզիոն շերտի նորոգման** աշխատանքների կատարումը:

Գնումը ֆինանսավորելու է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2012 թվականի ծախսերի նախահաշվով նախատեսված հատկացումների հաշվին եւ գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Կնքվելիք պայմանագրի կատարման ժամկետը պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչեւ 2012թ. հոկտեմբերի 01-ը ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք ունեն բոլոր անձինք՝ անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Թղթային ձեւով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչեւ սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 13:30-ը: Պարզեցված ընթացակարգի հրավեր տրամադրելու համար պահանջվում է վճար 5000 ՀՀ դրամ գումարի չափով, որը պետք է փոխանցվի Կոնվերս բանկ դրամով վճարման դեպքում 1930000199200100 «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հաշվեհամարին: **Ռուսերենով կամ անգլերենով հրավերի տրամադրման համար գանձվում է լրացուցիչ վճար 250.000 դրամի չափով: Հրավերը տրամադրվում է այդպիսի պահանջ ստանալու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում**: Պատվիրատուն պարտավորվում է պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը ստանալու օրվա ընթացքում պարզեցված ընթացակարգի հրավերը տրամադրել պարզեցված ընթացակարգի հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչեւ սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 13:30-ը եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով: Մասնակիցների, մասնակցության իրավունքի եւ որակավորման չափանիշների, հրավերով սահմանված պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար, Պատվիրատուին պետք է ներկայացվեն հրավերով նախատեսված փաստաթղթեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը Պատվիրատուն հայտարարում է հայտարարությունը էլեկտրոնային ձեւով ուղարկելով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով՝

1) գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկել պատվիրատուի եւ (կամ) գնահատող հանձնաժողովի որոշումները՝ պայմանագիր կնքելու մասին որոշմամբ սահմանված անգործության ժամկետում.

2) դատական կարգով բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի եւ գնահատող հանձնաժողովի որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու դեպքում բողոքը ներկայացվում է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով, գրավոր: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին:

*«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերություն*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2012 թվականի օգոստոսի 27-ի թիվ 1 որոշմամբ**

**Ծածկագիրը՝ ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ - 43/12**

Պատվիրատուն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել կայանի **թիվ 2 եւ 3 ջրահովացման աշտարակների ավազանների մաքրման** աշխատանքների գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում **թիվ 2 եւ 3 ջրահովացման աշտարակների ավազանների մաքրման** աշխատանքների կատարումը:

Գնումը ֆինանսավորելու է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2012 թվականի ծախսերի նախահաշվով նախատեսված հատկացումների հաշվին եւ գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Կնքվելիք պայմանագրի կատարման ժամկետը պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչեւ 2012թ. դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք ունեն բոլոր անձինք՝ անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Թղթային ձեւով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչեւ սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 12:00-ը: Պարզեցված ընթացակարգի հրավեր տրամադրելու համար պահանջվում է վճար 5000 ՀՀ դրամ գումարի չափով, որը պետք է փոխանցվի Կոնվերս բանկ դրամով վճարման դեպքում 1930000199200100 «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հաշվեհամարին: **Ռուսերենով կամ անգլերենով հրավերի տրամադրման համար գանձվում է լրացուցիչ վճար 250.000 դրամի չափով: Հրավերը տրամադրվում է այդպիսի պահանջ ստանալու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում**: Պատվիրատուն պարտավորվում է պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը ստանալու օրվա ընթացքում պարզեցված ընթացակարգի հրավերը տրամադրել պարզեցված ընթացակարգի հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչեւ սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 12:00-ը եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով: Մասնակիցների, մասնակցության իրավունքի եւ որակավորման չափանիշների, հրավերով սահմանված պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար, Պատվիրատուին պետք է ներկայացվեն հրավերով նախատեսված փաստաթղթեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը Պատվիրատուն հայտարարում է հայտարարությունը էլեկտրոնային ձեւով ուղարկելով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով՝

1) գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկել պատվիրատուի եւ (կամ) գնահատող հանձնաժողովի որոշումները՝ պայմանագիր կնքելու մասին որոշմամբ սահմանված անգործության ժամկետում.

2) դատական կարգով բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի եւ գնահատող հանձնաժողովի որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու դեպքում բողոքը ներկայացվում է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով, գրավոր: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին:

*«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերություն*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա Ն 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 30.8.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: